



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Արցախում ազդարարվեց ՀՀԴ Հայ դատի Արցախի գրասենյակի բացումը

Սույն թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀԴ Արցախի «Նիկոլ Դուման» կենտրոնում բացվեց ՀՀԴ Հայ դատի Արցախի գրասենյակը: Այդ առիթով ՀՀԴ Հայ դատի Կենտրոնական գրասենյակի կազմակերպմամբ՝ Ստեփանակերտում անցկացվեց ՀՀԴ Հայ դատի Արցախի գրասենյակի բացման պաշտոնական ընդունելություն, ինչի ընթացքում ներկայացվեցին Ղարաբաղյան հիմնախնդրի ներկա հանգրվանում Հայ դատի համաշխարհային ցանցի քաղաքական առաջնահերթություններն ու Հայ դատի Արցախի գրասենյակի գործունեության հիմնական ուղղությունները:

Պաշտոնական ընդունելությանը մասնակցում էին Արցախի Հանրապետության պաշտոնաթող նախագահներ Արկարի Ղուկասյանն ու Բակո Սահակյանը, արտգործնախարար Դավիթ Բաբայանը, Արցախի խորհրդարանի բոլոր խմբակցությունների եւ ՀՀ խորհրդարանի «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք:

ՀՀԴ Հայ դատի Արցախի գրասենյակը կղեկավարի ԱՀ արտաքին գործերի նախկին նախարար Գեորգի Պետրոսյանը:

Բացման խոսքում ՀՀԴ Բյուրոյի Հայ դատի Կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գեորգ Ղուկասյանը նշեց, որ ՀՀԴ Հայ դատի Կենտրոնական խորհուրդը, համախորհուրդ ՀՀԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի հետ, որոշեց Արցախում Հայ դատի գրասենյակի բացման միջոցառումն անցկացնել հենց այս պատմական օրը՝ մի կողմից արժեւորելու անկախ պետականության 30-ամյա ընթացքն ու անկախության գործընթացի անշրջելիությունը, իսկ մյուս կողմից վերահաստատելու այն, որ Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանությունը, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը, պատերազմի հետեւանքների վերացումն ու Արցախի վերականգնումը շարունակում են մնալ ՀՀԴ Հայ դատի համաշխարհային ցանցի գործունեության առանցքային խնդիրներն ու քաղաքական առաջնահերթությունները:

Պաշտոնական ընդունելությանը ողջունի խոսք էր հղել ՀՀԴ Բյուրոյի ներկայացուցիչ, Հայ դատի Կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատուրյանը՝ նկատելով որ 2020թ. աշնանը Արցախի եւ Թուրքիայի սանձազերծած 44-օրյա պատերազմի արհավիրքն ու արդյունքը անշուշտ խոցեցին մեր ազգային արժանապատվությունը, բայց Դաշնակցության համար Արցախյան այս վերջին պատուհասը լոկ ժամանակավոր նահանջ է:

Իր խոսքում ՀՀԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Արթուր Մոսիյանը բարի երթ է մաղթել ՀՀԴ Հայ դատի Արցախի գրասենյակին՝ հույս հայտնելով, որ այն կկարողանա հասարակության կարող, առողջ ուժերը համախմբելով լուծում տալ համազգային հիմնական մարտահրավերներին:

Արթուր Մոսիյանի խոսքով՝ այսօր առկա են բազում մարտահրավերներ եւ խնդիրներ, բայց ամենաառաջնայինը անվտանգությունն է, Արցախի Հանրապետության կարգավիճակի հարցը եւ ստեղծված ծանր բարոյա-հոգեբանական վիճակի հաղթահարումը:

«ՀՀԴ-ն իր աշխարհասփյուռ կառույցով, ՀՀԴ Հայ դատի գրասենյակներն ախտորոշել են հիմնական մարտահրավերները եւ պատրաստ են բոլոր կարողություններն ի սպաս դնել հայրենիքի փրկության եւ այս մարտահրավերները քայլ առ քայլ լուծելու ուղղությամբ», - նշել է ՀՀԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչը:

Ողջունելով գրասենյակի բացումը Ստեփանակերտում՝ Արցախի ԱԳ նախարարը բարձր է գնահատել Հայ դատի երկարամյա գործունեությունը՝ ուղղված Արցախի Հանրապետության շահերի պաշտպանությանը, Հայոց ցեղասպանության ճանաչմանը եւ համահայկական նշանակության տարբեր հարցերի լուծմանը: «Հայ դատը մեր ազգային ամենակայացած կառույցներից մեկն է, եւ իր ստեղծման առաջին օրվանից ակտիվորեն մասնակցում է մեր պետականաշինության գործին, ազգային ինքնության պահպանմանը, մեր եռամիասնության ամրապնդմանը: Անհնարին է պատկերացնել Արցախի միջազգային ճանաչման գործընթացը, Արցախի շահերի պաշտպանությունը, Արցախի գործացման գործընթացը՝ առանց ՀՀԴ-ի եւ Հայ դատի անմիջական մասնակցության», - նշել է Դ. Բա-



բայանը: Նա առանձնահատուկ անդրադարձ է կատարել արտաքին քաղաքականության եւ աշխարհաքաղաքական ներկայիս զարգացումներին՝ այդ համատեքստում կարեւորելով Արցախի աշխարհաքաղաքական տարբերակչության պահպանումն ու միջազգային ճանաչման գործընթացը:

Հայ դատի Կենտրոնական գրասենյակի պատասխանատու, ՀՀԴ Բյուրոյի անդամ Կիրո Մանոյանը խոսել է փոփոխվող քաղաքական իրավիճակի եւ, ըստ այդմ, Հայ դատի գրասենյակների ծավալած գործունեության մասին:

Անդրադառնալով Արցախյան հիմնախնդրին՝ Կիրո Մանոյանը նշել է, որ ՀՀԴ Հայ դատի հանձնախմբերի եւ գրասենյակների Արցախի հարցով աշխատանքներն ունեն չորս ուղղություն: «Առաջինը՝ Արցախի մարդասիրական օժանդակությունը միջազգային մասնակցությունն ապահովելն է: Երկրորդը՝ Արցախի Հանրապետության դեմ արդրեքանաթուրքական ագրեսիայի ճանաչումն է: Խոսքը միայն դատական գործերի, քաղաքական հայտարարությունների մասին չէ, այլ՝ որ քաղաքական ուժերը իրենք ընկալեն, որ կատարվածը ագրեսիա էր: Երրորդը՝ Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման հարցն է, ինչպես նախատեսված է Արցախի Սահմանադրությամբ: Եվ վերջին ուղղությունը՝ Արցախի կարգավիճակի ճշտումն է կամ միջազգային ճանաչումը՝ հիմնված Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի եւ այդ իրավունքի կիրառման փաստի վրա: Արցախի ժողովուրդն իր կամքն արտահայտել է մի քանի անգամ՝ սկսած 1991թ. դեկտեմբերի հանրաքվեից մինչեւ Սահմանադրության ընդունումը: Այս հիմնական ուղղությամբ է, որ ավելի քան 30 երկրների մեր կառույցներն աշխատում են», - նշել է Կիրո Մանոյանը:

Միջոցառման ընթացքում Արցախի ժողովրդի շնորհավորանքի եւ քաջալերանքի ուղերձներ են հղել Արցախի միջազգային բարեկամների «Pro Artsakh» ցանցի անդամ՝ օտարերկրյա մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ աշխարհի տասը երկրներից:

Դաշնակցության համար Արցախյան այս վերջին պատուհասը լոկ ժամանակավոր նահանջ է

ՀՀԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանի խոսքը Արցախում ՀՀԴ Հայ դատի գրասենյակի բացման առիթով.

«Յարգարժան հիւրեր, ընկերներ, Արցախի սիրելի հայրենակիցներ,

Նախ կը շնորհավորեմ բոլորիդ Արցախի անկախության երեսնամեակին առթիւ:

1988-1994-ի ազատամարտով հայ ժողովուրդը կարողացաւ միացնել ջանքերով եւ արեան ու քրտինքի գնով կերտել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը:

նը, որ կը հանդիսանայ ամբողջական Հայաստանի մեր տեսլականին առաջին հանգրուանը:

2020-ի աշնան Ազրպեյճանի եւ Թուրքիոյ սանձազերծած 44-օրեայ պատերազմի արհաւիրքը եւ արդիւնքը անշուշտ որ խոցեցին մեր ազգային արժանապատուութիւնը, բայց Դաշնակցութեան համար Արցախյան այս վերջին պատուհասը լոկ ժամանակավոր նահանջ է. Արցախահայութիւնը, ինչպէս նաեւ հայ ժողովուրդը առհասարակ, իր մէջ ունի բաւարար ներուժ՝ ձգտելու, որ ոտքի կանգնի Արցախը, ապրի անկախ ու հայատրոփ ոգիով եւ յարատեւօրէն զարգանալ մինչեւ անոր վերամիաւորումը Մայր Հայաստանի հետ:

Կը գիտակցինք, որ մեր սորագոյն պատմութեան ճակատագրական եւ բախտորոշ շրջափուլի մէջ ենք այսօր: Կ'անդրադառնանք, որ յաւելեալ ճիգ ու ջանք են հարկաւոր դիմագրաւելու համար մեր առջեւ ցցուող բոլոր մարտահրաւերները: Բայց մեր կամքն անսկուն է, ու մենք պատրաստ ենք ներդնելու մեր ամբողջ կարողականութիւնը եւ բազմապատկելու մեր աշխատանքները՝ ի սպաս Արցախի դատին:

Եւ որպէս 2021-ի կարեւոր սոր քայլ, այսօր կը յայտարարենք Հ.Հ.Դ. Հայ Դատի Արցախի գրասենյակին հաստատումը, որպէսզի անգամ մը եւս շեշտենք մեր տեսլական յանձնառութիւնը Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման եւ Արցախի բնակչութեան յետ-պատերազմեան կարիքներուն աջակցելու գծով, միաժամանակ՝ պատգամ կը փոխանցենք միջազգային հանրութեան եւ Ազրպեյճանին ու իր դաշնակիցներուն, որ հակառակ 44-օրեայ պատերազմի հետեւանքներուն, մենք պատրաստ ենք սատարելու Արցախի զարգացման եւ ամրապնդելու Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը:

Մեր գրասենյակի առաքելութեան մաս պիտի կազմեն՝ Արցախի հարցով աշխատանքները խթանելու համար նիւթերու եւ տեղեկութիւններու փոխանցումը, Արցախի համապատասխան մարմիններուն եւ կառույցներուն հետ առօրեայ յարաբերութիւնը, Արցախ այցելութիւններու սատարումը, Հայ Դատի Կեդրոնական գրասենյակի աջակցութեամբ խորհրդատուութիւններու կազմակերպումը, Արցախի Բարեկամներու ցանցի ընդլայնումը եւ, առհասարակ, Հայ Դատի աշխատանքներու քարոզչութիւնը Արցախահայութեան մօտ: Այսպիսով, Հայ Դատի Արցախի գրասենյակը կու գայ միանալու ՀՀԴ Բյուրոյի անմիջական վերահսկողութեան տակ գործող մեր կեդրոնական գրասենյակներու ցանցին:

Շնորհակալութիւն Արցախի գրասենյակի բացման այս հանդիսութեան ձեր մասնակցութեան համար: Վստահ ենք, որ բոլորդ ալ քաջալեր պիտի հանդիսանաք անոր բազմակողմանի գործունեութեան:

Կեցցե՛ հայ ժողովուրդը եւ կեցցե՛ անոր անբաժան մասնիկ հանդիսացող Արցախի արի ու վեհանձն հայութիւնը:

Տաթևիկ ԱՂԱԶՍԷՅԱՆ

Մեր անվտանգային համակարգն ամրապնդելով՝ թշնամուն խաղաղություն պարտադրել

ՀՀ Բյուրոյի նախագահ, ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանը ելույթ է ունեցել սեպտեմբերի 1-ին Արցախում կայացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անկախության հռչակման 30-ամյակին նվիրված ԱՀ Ազգային ժողովի հատուկ նիստին:



Նա նշել է, որ այսօր, առավել քան նախորդ բոլոր 30 տարիներին, կարելի է, որ մենք միասին նշում ենք Արցախի Հանրապետության Անկախության հռչակման օրը: «Մենք թվով մեր թշնամիներից քիչ ենք, բայց երբ միակամ ենք, համախմբված ենք, այդ առավելությունն է չիք է դառնում: Մեր հաջողությունը կարելի է ապահովել միասնությունով: Այո, փորձություններ կարող են լինել, որը պետք է հարբերատար հաղթահարել: Այդ փորձությունների հաղթահարման համբերատարությունից ծնվելու է նոր եռանդ, նոր ուժ, նոր հնարավորություն է նոր հույս, որը երբեք չի խաբելու մեզ»:

Արմեն Ռուստամյանը շեշտել է, որ ինչպես 30 տարի առաջ, այսօր էլ Արցախը նորից գոյատևման լուրջ խնդիր ունի, Արցախի հայությունն իր հայրենիքում պահպանվելու խնդիր ունի: «Այդ տարիների հետոս նախնիները, նախկինները, որոնց մի զգալի մասն այսօր մեզ հետ է, շատ իմաստուն որոշում կայացրին՝ հասկանալով, որ ստեղծված իրավիճակում Արցախը հայկական պահելու ամենաճիշտ ճանապարհը Արցախի Հանրապետության հռչակումն է, որով ոչ միայն Արցախի հայապահպանության խնդիրն էր լուծվելու, այլ նաև ապահովվելու էր որպես վերջնականապես Մայր հայրենիքի հետ միացումը:

Իհարկե, այս կարճ խոսքի մեջ դժվար է շարադրել այն դասերը, խորհուրդները, որ քաղցեցինք այս ամբողջ 30 տարիներին: Բայց մի բան ակնհայտ է, որ մենք հաջողել ենք և հաղթել ենք այն ժամանակ, երբ հավատարիմ ենք մնացել մեր իսկ խորհուրդին, մեր իսկ ուխտին, մեր իսկ հռչակագրերին, լինի դա Հայաստանի Անկախության հռչակագիրը, թե ԼՂՀ Անկախության հռչակագիրը: Չախողվել ենք, կորուստներ ենք ունեցել, երբ որ այդ նախանշված ուղուց այս կամ այն չափով շեղվել ենք»:

ՀՀ Բյուրոյի անդամի խոսքով՝ այսօրվա մեր խնդիրը նույնն է՝ վերականգնել, վերակենդանացնել, վերակազմակերպել և նույն առաջնորդությամբ գնալ առաջ: «Այսօր պետք է արձանագրենք, որ մեր հաղթանակի մի մասը կորցրել ենք, բայց մենք հասկանում ենք, որ ամեն ինչ կորած չէ և միշտ կարելի է տեղ գտնել՝ վերականգնել կորսվածը: Նոր սերնդի, նոր իշխանությունների առաքելությունը, լինի Հայաստան, Արցախ, դա՛ պետք է լինի: Մենք նորից կանգնած ենք Արցախը հայկական պահելու պարտավորության առաջ: Գիտենք, թե ինչ թշնամու հետ գործ ունենք: Այդ թշնամուց խաղաղություն մուրալ անիմաստ է, այդ թշնամուն միայն պետք է խաղաղություն պարտադրել: Այդ թշնամին ոչ թե միջազգային չափանիշներով, տարբեր նորմերով առաջնորդվող լուծումներ է փորձելու առաջարկել, այլ նրա նպատակը Արցախի հայաթափումն է: Եվ սա մենք հասկացել էինք 30 տարի առաջ: Արցախի ժողովուրդը հասկացել էր, որ եթե չկանգնի այդ գծի վրա, այս պայքարը չդարձնի համահայկական, նախիջեանահայության օրինակը կգործի: Մենք պետք է կարողանանք այնպես ուժեղանալ, թողափել մեզ կաշկանդող, իրարից բաժանող մտքերը, խառնակիչ գործընթացները, որ կարողանանք արագորեն վերագտնել մեր միասնականությունը և մեր հաղթանակը վերականգնել: Սա է այսօրվա խորհուրդը»:

Խոսելով նոր մարտահրավերների մասին՝ Արմեն Ռուստամյանը շեշտել է, որ Արցախի անկախության ճանապարհով է միայն հնարավոր արցախահայության գոյությունն այս տարածքներում: «Պետք է բացառվի որևէ կարգավիճակով Արցախի կազմում Արցախի գոյությունը, որից էլ սկսվեց մեր ամբողջ պայքարը, պետք է ապահովվի անխափան և երաշխավորված ցամաքային կապ Մայր Հայաստանի հետ, ապահովվի կենսականորեն անհրաժեշտ բոլոր պայմանները՝ անվտանգային հոսանքի համակարգ ձեւավորելու առումով»:

«Արցախի անկախության և Հայաստանի ինքնիշխանության հարցերը իրար հետ շաղկապված են. մեկի կորուստը բերելու է մյուսի կորուստին: Մենք մեկ միասնական համակարգի մեջ ենք և մեկ միասնական համակարգով պետք է հաղթահարենք այս մարտահրավերը: Մենք պետք է Արցախի պարտադրենք հրաժարվել ռազմական ճանապարհով հարցի լուծումից և գալ խաղաղ կարգավորման դաշտ: Դա երբեք իր շահերից չի բխել: Պատահական չէ, որ 30 տարիներին 3 անգամ պատերազմ է իրահրել: Մենք պետք է պահանջենք, պարտադրենք և մեր բոլոր լծակները, թե՛ արտաքին, թե՛ ներքին, օգտագործենք, որ խաղաղ կարգավորման գործընթացը իրական դառնա: Այդ առումով շատ մեծ է կարելիոր նշանակություն ունի մեր հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ և խաղաղապահ ուժերի առկայությունն այս տարածաշրջանում: Շատ կարճ ժամանակահատված ունենք՝ ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը և մեր անվտանգային համակարգն ամրապնդելով՝ թշնամուն խաղաղություն պարտադրել: Ուրիշ ճանապարհ չկա: Եվ մեկ վստահ եմ, որ մեր ժողովուրդը, ողջ հայությունն այս պարզ գիտակցությունը կունենա, և մենք շատ արագ կվերագտնենք մեր բոլոր հնարավոր եղանակները՝ նորից վերականգնելու մեր կորցրածը և նորից վայելելու հաղթանակի բերկրանքը»,- խոսքը եզրափակել է Արմեն Ռուստամյանը:

Տարեկի ԱՐԱՋԱՆՅԱՆ

Հատուկ նիստ՝ Հանրապետության հռչակման 30-ամյակի առթիվ

Սեպտեմբերի 1-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովը հրավիրել է հատուկ նիստ՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 30-ամյակին:

Հատուկ նիստին ԱՀ Ազգային ժողովի Արթուր Թովմասյանի հրավերով մասնակցում էին ՀՀ ԱՀ պատգամավորներ, ԱՀ կառավարության անդամներ, հրավիրյալներ: Հատուկ նիստը բացվել է Արցախի օրհներգով, որից հետո զեկույցով հանդես է եկել ԱՀ Ազգային ժողովի Արթուր Թովմասյանը: Խոսելով արցախահայության պայքարի մասին՝ Արթուր Թովմասյանը հույս է հայտնել, որ անկախության հռչակման հետագա հրեքյանները մենք և մեր սերունդները կտունենք արժանապատիվ կերպով և խաղաղված հոգով:

«Անկախության հռչակագիրը ռազմաքաղաքական առումով թերի էր, մեր կյանքով ու կենսակերպով պետք է ամրագրենք ու սրբագրենք Անկախության հռչակագիրը և հրաժարվենք այն ավարտված համարելու մոլորությունից: Արցախի Հանրապետությունը, նրա ժողովուրդը ու համայն հայությունը ամեն օր պետք է բացեն Անկախության հռչակագրի կենսահաստատման նոր էջ: 30-ամյա անկախ պետականության դասերի եզրահանգում մեկն է՝ նոր իրողությունների պրիզմայի տակ Արցախ-Հայաստան-Սփյուռք միասնականության ունեցած մարդկային ու նյութական ռեսուրսների մեկտեղում», - իր ելույթում նշել է ԱՀ Ազգային ժողովի Արթուր Թովմասյանը: «Մենք պարտադրված ենք տեր կանգնել Աստծո կամոյն ու ճակատագրով մեզ բաժին հասած հայրենիքին, բուժել վերքերն ու առաջ գնալ»,- նշել է նա:

Օրինակի խոսքով հանդես է եկել Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմակալ առաջնորդ Կրթնես Եպիսկոպոս Աբրահամյանը: «Անկախության հռչակագիրը բարի ավետիսի պես Արցախի բարձունքներից տարածվեց և մտավ ամեն հայի տուն: Անկախությունը միայն հռչակագիր չէ, միայն Սահմանադրություն չէ: Սրանք երկուսն էլ անհրաժեշտ են, բայց այն առաջին հերթին անկախ ապրելու արժանապատվություն է: Այսօր մենք պետք է մեր անձր մոռանալը, միանալը հոգեբան հաղորդության և մեր հաղթանակներն ու շանքերն ուղղենք մեր հայրենիքի գործընթացի վրա, որովհետև ամեն ինչ անհետ կորած չէ: Աստված թողել է այս մնացորդ հողը, որի վրա պետք է ամուր կանգնենք ու առաջ շարժվենք: Անկախության հիշա-



տակի այս տոնին ավելի ակնհայտ է դառնում, որ Արցախի արդար դատի վերջնական հաղթանակի գաղտնի ուժը մեր ամբողջ հայության միասնականության մեջ է թաքնված: Եկել է ժամանակը, հատկապես այսպես փորձություններից հետո, որ սկսենք հասկանալ, որ մենք ազգի տարբեր կարկատաններ չենք՝ «հայաստանահայ», «արցախահայ», «սփյուռքահայ» ստորգելիներով բաժանված: Մենք մեկ ազգ ենք, ուր էլ որ լինենք»,- ասել է Արցախի թեմակալ առաջնորդը՝ համայն հայությանը կոչ անելով գործիք լինել Արցախի ժողովուրդին, նպաստել նրա հզորացմանը:

Այնուհետև ելույթներով հանդես են եկել ԱՀ ԱՀ նախարար Դավիթ Բաբայանը, ՀՀ ԱՀ պատգամավորներ Ռուբեն Ռուբինյանը, Արմեն Ռուստամյանը, Արթուր Վանեցյանը:

Իր խոսքում Դավիթ Բաբայանը նշել է, որ անհրաժեշտ է ուժեղացնել, գորացնել Արցախի Հանրապետությունը, ինչը նաև կնշանակի Մայր Հայաստանի գորացում և զարգացում: «Այս պահի դրությամբ մեր առջև կանգնած են բազում դժվարություններ, մարտահրավերներ շատ լուրջ են, բայց կան նաև հնարավորություններ՝ պահպանելու Արցախը: Դրա համար պետք է, որ արցախապահպանությունը և արցախապահպանությանը լինի Հայաստանի և

Սփյուռքի հասարակական-քաղաքական կյանքի առանցքային հիմքերից մեկը: Ի վիճակի ենք լինելու՝ անկախ ամեն ինչից, և թող թշնամիները չուրախանան. դեռուս հարց է՝ ինչ է լինելու 10, 20, 30 տարի հետո: Եկեք նորից համախմբվենք, հաղթահարենք բոլոր դժվարությունները: Եթե մենք ինքներս մեզ հաղթենք, որևէ մեկը չի կարող հաղթել մեզ»,- նշել է Դ. Բաբայանը:

ՀՀ ԱՀ «Պատիվ ունեն» խմբակցության ղեկավար Արթուր Վանեցյանն իր խոսքում նշել է, որ աղետաբեր պատերազմից և մեծաթիվ կորուստներից հետո մեր երկու պետությունների առջև ծառայած բազում մարտահրավերների առկայության պայմաններում այս օրը հատուկ խորհուրդ ունի:

«Այդ խորհուրդը մեր միասնությունն է: Մեզ անհրաժեշտ է լինելու հայկական աշխարհի միասնականությունը, քանի որ Արցախն է այն հիմնական առանցքներից, եթե կուզեք այն ամուր շաղախը, որն անքակտելիորեն ամրացնում է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամասնությունը: Եվ հենց Արցախում է, որ վճռվել, վճռվում ու վճռվելու է մեր ժողովրդի՝ որպես պետականություն կրող արժանապատիվ ազգի ապագան:

Արցախի հետ ենք: Մեր ուժերի ներածի չափով որևէ շանք ու եռանդ չենք խնայելու՝ և հայկական, և միջազգային անխտիր բոլոր հարթակներում առաջ մղելու Արցախի անվտանգային խնդիրների լուծման հարցերը, որոնք ի վերջո պետք է պսակվեն Արցախյան հիմնահարցի հայանապատ կարգավորմամբ, ԱՀ ժողովրդի ինքնորոշման միջազգային ճանաչմամբ, Արցախից բռնազավթած տարածքների դեֆոկուպացիայով և դրանցից բխող բոլոր գործընթացներով»,- ասել է Արթուր Վանեցյանը:

«Ազգային պառակտմամբ, պետականության հանդեպ անփույթ վերաբերմունքով, Արցախի խնդիրները միտումնավոր, թե ապաշտրիկությամբ լուսանցք մղելով ի վերջո կարող ենք ամեն մի աղետաբեր հանգույնի, երբ վտանգված կլինի ոչ միայն Արցախի, այլ նաև ՀՀ գոյության փաստն ինքնին: Հենց համազգային միասնությունը և համախմբումն է, որ կարող է դուրս բերել մեզ դուրս ճակատներից իրավիճակից և ի վերջո դուրս ճացել ոչ թե դեպի ինչ-որ մշուշոտ, այլ մեր ժողովրդի հազարամյա ազգային իղձերի և երազանքների իրականացումն ապահովող անվտանգ ապագա:

Արցախի Հանրապետության մեր բոլոր եղբայրներին և քույրերին վստահեցնում եմ, որ մշտապես կանգնած ենք լինելու ձեր թիկունքին, ամեն ինչով աջակցելու և օժանդակելու ենք ձեզ, ամեն կերպ սատարելու ենք հարցերի հարցի լուծմանը՝ Արցախի ինքնորոշման և անկախ կարգավիճակի միջազգային ճանաչմանը: Դրան այլընտրանք չի կարող լինել, քանզի նաև վերջին պատերազմի դառը փորձը ցույց տվեց, թե որքան սերտորեն և անքակտելիորեն են միմյանց փոխկապակցված Հայաստանի և Արցախի հանրապետությունների ճակատագրերը անխտիր բոլոր ուղղություններով: Արցախի հետ բայց մեր ոչ միայն նույնն են մեր ճակատագրերը, այլ նաև մեր երակներում հոսում է ազատատենչ հայի միեւնույն արյունը, ուստի մենք չենք կարող հետ կանգնել Արցախյան արդար հաղթի, ընկրկել թշնամական ինֆորտանքների առջև, հանձնվել բախտալու ու ոսոխի քմահաճույքին: Ուստի, չենք դադարելու երազել ու գործել, արարել ու պաշտպանել, մաքառել և հաղթել»,- խոսքը եզրափակել է Արթուր Վանեցյանը:

ՀՀ ԱՀ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը ՀՀ ԱՀ նախագահ Ալեն Սիմոնյանի անունից շնորհավորել է Արցախի Հանրապետության հռչակման 30-ամյակի կապակցությամբ: Նա նշել է, որ Արցախը չի հրաժարվել հակահայ քաղաքականությունից և Արցախի ժողովուրդը մի քանի անգամ ստիպված է եղել ապացուցելու իր հաստատանքայինությունը՝ պաշտպանելու սեփական հայրենիքը:

Հատուկ նիստից հետո ԱՀ ԱՀ «Հայ Զեղափոխական Դաշնակցություն» խմբակցությունը հանդիպել է Արցախի ժամանած «Հայաստան» և «Պատիվ ունեն» խմբակցությունների հետ, որոնք ընթացքում կողմերը կարելու են համագործակցության շարունակականությունը, տեսակետներ փոխանցվել մտահոգող մի շարք հարցերի շուրջ:

S. ԱՐԱՋԱՆՅԱՆ

Արցախյան ազատագրական շարժման նպատակը՝ միացում

Լրացավ ԼՂՀ Անկախության հռչակման 30-ամյակը: Այն նշվեց Արցախի Հանրապետությունում, բայց ոչ այն շուքով, որը հարիր է նման տոներին: Պատճառն ինքնին հասկանալի է՝ 44-օրյա պատերազմն է:

ԼՂՀ անկախության հռչակումից 30 տարի է անցել, բայց, ցավոք, առ այսօր լուրջ քննարկման չի ենթարկվել, թե արդյո՞ք ճիշտ էր Մայր Հայաստանի հետ վերամիավորումից հրաժարումը եւ անկախ պետության ստեղծումը:

Հարցին պատասխանելու համար պետք է անդրադառնանք ակունքին՝ ազգային-ազատագրական շարժմանը:

Երեսուներեք բարձունքից նայելով եւ ծանոթ լինելով Արցախյան ազգային-ազատագրական շարժման վերաբերյալ բազմաթիվ հրապարակումների, կարծում եմ՝ Շարժումը եւս կարող է համակողմանի գիտական ուսումնասիրման եւ ճիշտ գնահատականի:

Արցախյան ազգային-ազատագրական շարժումը ներկայացնեք փիլիսոփայական, ժամանակագրական եւ հոգեւոր-աստվածաբանական տեսանկյուններից:

Ազգային-ազատագրական հեղափոխության ակունքը ազգային գաղափարախոսությունն է՝ ուղղված.

- օտարերկրյա տիրապետության վերացման,
- ազգային անկախության նվաճման,
- ազգային-գաղութային ճնշման ու շահագործման ոչնչացման,
- ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման,
- ազգային պետության ստեղծման,
- այլ պետության հետ միավորման կամ համադաշնության ստեղծման:

Վերը շարադրվածից դժվար չէ եզրակացնել, որ Արցախյան ազգային-ազատագրական շարժումը վերածվել է հեղափոխության, եւ արդյունքում ստեղծվել է անկախ պետություն: Իսկ ինչո՞ւ չի վերամիավորվել Հայաստանին. մի՞թե մեր նպատակը անկախ պետության ստեղծումն է եղել: Նման բազմաթիվ հարցերին ի պատասխան՝ նշվում է, որ տվյալ ժամանակահատվածում միակ եւ ճշմարիտ քայլը դա է եղել: Որպեսզի հարցի պատասխանը թերի չլինի, ավելացնում են նաեւ, որ «անկախ պետությունը» միջոց է նպատակին՝ «Միացմանը» հասնելու համար:

Նախ, անկախ պետության ստեղծումը յուրաքանչյուր ազգի համար գերնպատակ է. այն ավելի բարձր կարգավիճակ է, քան այլ պետության հետ միավորումը կամ համադաշնության ստեղծումը:

Հետո, միամտորեն հարց տանք, որ եթե, իրոք, անկախ պետություն ստեղծումն անհրաժեշտ քայլ է եղել, ապա ինչո՞ւ այդ քայլն առաջադրող կամ պարտադրող պետությունը կամ պետությունները Արցախի Հանրապետության անկախությունը մինչեւ հիմա չեն ճանաչել (մասնավորապես՝ Հայաստանը եւ Ռուսաստանը):

Բացի դրանից, միջազգային փորձը ցույց է տալիս, որ անկախ պետություն ստեղծելու եւ միջազգայնորեն ճանաչվելու գործընթացն ավելի բարդ է, քան ճանաչված պետության կազմի մեջ մտնելը, մանավանդ, որ առկա են թե՛ իրավական, թե՛ պատմական բոլոր հիմքերը: Գոյություն ունի շրջանաձուլ մեկ այլ տեսակետ, ըստ որի՝ Արցախի Հանրապետության անկախության հռչակումը փոխզինում է: Այդ տեսակետի կողմնակիցների հիմնավորումը շատ թույլ է եւ խոցելի: Նախ, հետաքրքիր է իմանալ. Ադրբեջանն ընդունել է այդ փոխզինումը եւ դրա փոխարեն ի՞նչ է գիշել: Բացի դրանից, Ադրբեջանի համար ի՞նչ տարբերու-

թյուն, թե Արցախը բաժանվելուց հետո (իրավաբանորեն՝ վերջնական բաժանումը տեղի է ունեցել 1989թ. դեկտեմբերի 1-ին) անկախ պետություն է ստեղծում, թե՞ միանում է այլ պետության:

Հիմա դիտարկենք եւ համեմատենք Արցախի Հանրապետության հռչակումը Կոստովի, Հարավայի Օսիայի եւ Աբխազիայի հետ:

ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի «առաջարկով» Կոստովն, օգտվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի հանրաճանաչ սկզբունքից, Սերբիայի տարածքում անկախացավ 2008թ. փետրվարի 17-ին: Ներկայումս Կոստովի անկախությունը ճանաչել են ՄԱԿ-ի անդամ 104 պետություն:

Ռուսաստանի «հորդորով» Աբխազիան եւ Հարավայի Օսիան անկախացան, եւ 2008թ. օգոստոսի 26-ին Ռուսաստանի Դաշնությունը պաշտոնապես ճանաչեց այդ երկրների անկախությունը: Կարճ ժամանակ անց Ռուսաստանին միացան նաեւ Նիկարագուան, Վենեսուելան եւ Լատուրուն:



Իսկ Արցախի Հանրապետության պարագայում՝ անգամ Մայր Հայաստանը չճանաչեց...

Արցախյան ազգային-ազատագրական շարժումը դիտարկենք նաեւ այլ տեսանկյունից:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման ժամանակագրությանն անդրադառնալով՝ պարզ է դառնում, որ հայկական կողմի յուրաքանչյուր քայլ եղել է պարտադրված կամ, լավագույն դեպքում, կախված հակառակ կողմի քայլերից, այլ ոչ թե նպատակաուղղված՝ ռազմավարական ծրագրի իրականացման քայլեր են եղել: Հակառակ դեպքում, ինչո՞ւ պիտի հայկական կողմը հրաժարվի 1989թ. դեկտեմբերի 1-ի՝ ՅՍԽՀ Գերագույն խորհրդի եւ Արցախի Ազգային խորհրդի համատեղ նիստի որոշման ընդունող փայլուն հնարավորությունից եւ ստեղծի երկրորդ հայկական անկախ պետությունը: Այդ քայլով, փաստորեն, Արցախն անջատվել է Հայաստանից, ոչ թե Ադրբեջանից: Եւ պատահական չէ, որ Մեծ Բրիտանիան, 1991թ. դեկտեմբերի 31-ին ճանաչելով ՀՀ անկախությունը (անգլիական դիվանագիտական սուր աչքը չի վրիպել), հատուկ շեշտադրում է արել եւ չի «վավերացրել» վերոհիշյալ որոշումը:

Արցախյան ազգային-ազատագրական շարժումը դիտարկենք հոգեւոր-աստվածաբանական տեսանկյունից: Աստվածաշնչից հայտնի է՝ «Ձայն բազմաց, ձայն Աստծո» արտահայտությունը: Շարժման առաջին իսկ օրվանից հազարավոր մարդիկ հրապարակում հավաքված պահանջում էին Արցախի վերամիավորումը Մայր Հայաստանին, այսինքն՝ խաթարված արդարության, ճշմարտության վերականգնում: Անկախ նրանից,

որ այդ ժամանակ ժողովրդի մեծամասնությունն անհավատ էին կամ աթեիստներ, միեւնույն է, նրանք կամա թե ակամա առնչվել են Բարձրյալի հետ՝ այն պարզ պատճառով, որ կատարյալ արդար եւ ճշմարիտը Աստված է: Եւ պատահական չէ, որ փետրվարի 13-ին է սկսվել Շարժումը (նախատեսված էր փետրվարի 15-ին), որը, ինչպես հայտնի է, Տեառնընդառաջի նախատեսակի օրն է: Շարժման սկզբնական տարիներին ժողովրդի մի ստվար մասը դարձի է եկել առ Աստված եւ դարձել Հայ առաքելական եկեղեցու զավակներ: 1989թ. կազմավորվել է ՀԱԵ Արցախի թեմը: Այդ տարիներին Մայր Հայաստանում եւ Արցախում աննախադեպ ազգային եւ հոգեւոր վերագարթնք է եղել, որն էլ հանդիսացել է գրավականը մեր բոլոր հաղթանակների:

1988թ. մարտի 24-ին ԽՍՀՄ ղեկավարությունը որոշում է ընդունել ԼՂԻՄ-ին տրամադրել 400-450 միլիոն ռուբլի, որպեսզի այն նպատակաուղղվի մարզում կուտակված սոցիալ-տնտեսական եւ մշակութային հարցերը լուծելուն: Բնականաբար, արցախահայերը հրաժարվել են այդ գումարից:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման ամենաեռանդուն շրջանում Ադրբեջանի իշխանությունները սովի են ենթարկել արցախահայությունը: Բայց եղել է մի պահ, որ տոննա-եւ տարատեսակ խմիչքներ են ուղարկել: Ստեփանակերտի երկաթուղային կայարանում վազուները բեռնավորված օրերով սպասել են, բայց ոչ ոք չի մտնեցել բեռնաթափելու: Վերը նշվածները համեմատելի են Հիսուսի՝ անապատում փորձության հետ:

Ըստ Դուկասի ավետարանի. «Երբ նա քառասուն օր չկերավ ու չխմեց, եւ երբ դրանք լրացան, քաղց զգաց: Եվ սատանան նրան ասաց. «Եթե Աստծո Որդի ես, այդ քարին ասա՛, որ հաց լինի»: Հիսուսը նրան պատասխանեց ու ասաց. «Գրված է. միայն հացով չէ, որ կապրի մարդ, այլ՝ Աստծո ամեն խոսքով»:

Առաջին լուրջ փորձությունը հաղթահարված էր: Դրան հետեւեց հաջորդը՝ ԽՍՀՄ ղեկավարությունը մի շարք հեղինակավոր հայորդիների հրավիրեց Մոսկվա եւ նրանց իշխանություն, բարձր պաշտոններ խոստացավ, Արցախում մտցվեց ԽՍՀՄ-ում նախադեպը չունեցող իշխանություն՝ Հատուկ կառավարում, միայն թե վերջ տրվի ազգային-ազատագրական շարժմանը: Արցախահայությունն այդ փորձությանն էլ դիմացավ, որի Աստվածաշնչյան զուգահեռը հետեւյալն է. «Եվ սատանան բարձրացնելով նրան մի բարձր լեռ, մի վայրկյանում նրան ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորությունները եւ ասաց. «Եթե կտամ այս ամբողջ իշխանությունը եւ սրանց փառքը... Արդ, եթե դու իմ առաջ ընկած երկրպագես, բոլորը քոնք կլինեն»: Հիսուսը պատասխանեց նրան եւ ասաց. «Գրված է՝ քո Տեր Աստծուն պիտի երկրպագես եւ նրան պիտի պաշտես»:

Երրորդ փորձությունը, որին դիմացավ արցախահայությունը՝ դա պատերազմն էր: Յոթ միլիոն բնակչություն ունեցող Ադրբեջանը միջազգային հանրության եւ

աշխարհի գերտերությունների թողովության պայմաններում հարձակվեց 150 հազար խաղաղ բնակիչ ունեցող Արցախի վրա: Մինչեւ պատերազմն սկսվել «հայրենի իշխանությունները» զինաթափել էին արցախահայությանը, անգամ որսորդական հրացաններն էին նախօրոք առգրավել: Այս անգամ փորձության էր դրված Հայրենիքի պաշտպանությունը: Այդ ժամանակ Արցախում տարբեր լուրեր էին պտտվում, անգամ «հավաստի աղբյուրները» հաստատում էին, որ պատրաստ են արցախահայությանը քաղաքական ապաստան տրամադրել այլ երկրներում, մասնավորապես՝ Ավստրալիայում: Արցախահայերը կարող էին հանգիստ թողնել իրենց բնօրրանը եւ տեղափոխվել գոնե Հայաստանի Հանրապետություն, բայց նրանց մեջ արթնացել էր Հայկ Նահապետի, Արամ Աշխարհակալի, Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնյանի, Դավիթ Բեկի, Մխիթար Ապարապետի, Ավան հարյուրապետի, Դանիել Բեկի եւ Պողոս Բեկ Փիրումյանների, Անդրանիկ գործարարի, Գարեգին Նժդեհի, Արամ Մանուկյանի եւ այլ երեւելիների արյունը, Հայոց սրբերի ոգիները: Եւ հայր պաշտպանել է իր հայրենիքը... Իսկ Աստվածաշունչն այդ ուղղությամբ քանի-քանի դար հուշում է. «Եվ տարավ նրան Երուսաղեմ, կանգնեցրեց տաճարի աշտարակի վրա ու ասաց նրան՝ եթե Աստծո Որդի ես, քեզ այստեղից ցած գցիր, որովհետեւ գրված է. «Իր ինչտակներին պատվիրված է քո մասին, որ քեզ պահեն եւ իրենց ձեռքերի վրա կռնեն քեզ, որ քո ոտքը երբեք քարին չիսփես»: Հիսուսը պատասխանեց նրան եւ ասաց. «Ասված է՝ քո Տեր Աստծուն պիտի չփորձես»: Այո, Աստծուն չեն փորձում, ինչպես նաեւ փորձելու ենթակա չեն մեր ազգի ինքնության չորս հիմնասյուները՝ Հայրենիքը, Հայոց լեզուն, Հավատը՝ ի դեմս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Հայ դատը (համայն հայության իրավունքների պաշտպանությունը):

Հոգեւոր տեսանկյունից գնահատելով ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության եւ անկախության ճանաչմանը ձգտող Արցախի Հանրապետության ներկա կացությունը՝ դժվար չէ նկատել, որ երկու պետությունների միջեւ ծագող հակասությունների հիմնական պատճառը եղել է մնալու է ազգի բաժանումը երկու միավորների: Ընդդիմախոսները կարող են նշել, թե դա զուտ քաղաքականությունից դրված իրավիճակ է, ինչպես ընդունված է նշել՝ օտարների համար ենք մենք անկախ, իրականում միասնական պետություն ենք: Տա՛ր Աստված, այդպես լինեք: Աստվածաշնչում մեր պարագայի համար է գրված. «Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է, եւ ինքն իր մեջ բաժանված ամեն տուն՝ կործանվում»: Շատ խիստ է գրված, բայց Աստվածաշնչյան ճշմարտությունը պարտավոր ենք ընդունել: Ուստի, ժամանակն է, որ նորովի՝ ազգային-հոգեւոր լույսի ներքո գնահատենք երկու հայկական պետությունների ներկան եւ վճռականություն ցուցաբերենք արագացնելու Արցախի վերամիավորման գործընթացը Մայր Հայաստանին:

Միացման առաջին քայլը կարող է լինել ՀՀ եւ ԱՀ «Քաղաքացիության մասին» օրենքներում երկքաղաքացիության մասին դրույթների հստակեցումը եւ չափահաս արցախահայերին ՀՀ քաղաքացիություն շնորհելը, իսկ հաջորդ քայլը՝ վերամիավորման վերաբերյալ հանրաքվեի անցկացումը Արցախի Հանրապետու-

«Ոսկե արծիվ» շքանշանակիր Նարեկ Հովհաննիսյան

Արցախյան 44-օրյա պատերազմը նահանջների ու տարածքային կորուստների հետ մեկտեղ ունի նաև հերոսական պաշտպանության, հակահարձակման ու թշնամու թիկունքում հաջող մարտական գործողությունների բազում օրինակներ: Դրանց հետևում կանգնած են հոգով արի, խիզախ մարտիկներ, որոնց վճռական գործողությունները հույս են ներշնչել զինակիցներին ու սարսափի մատնել թշնամուն: Այդպիսի մարտիկներից էր ավագ լեյտենանտ Նարեկ Հովհաննիսյանը, ով իր մարտական ընկեր թովմաս Թովմասյանի ու մի խումբ զինակիցների հետ մի քանի անգամ անցել է թշնամու թիկունք, ոչնչացրել նրա զինտեխնիկան, կազմակերպել հմուտ պաշտպանություն ու հաջողված հարձակողական գործողություններ:

Պատերազմի ընթացքում ստեղծված հատուկ գրոհային խմբի կազմում նրանք պաշտպանական մարտեր են մղել ու մարտական գործողություններ են իրականացրել սկզբում յոթերորդ պաշտպանական շրջանում (Եղնիկներ), այնուհետև՝ մի շարք այլ ուղղություններում, ներառյալ՝ Սղնախ, Քարին տակ գյուղերի ու Շուշիի մատույցներում: Նրանք դարձել են խիզախության ու վճռականության խորհրդանիշներ՝ մինչև կյանքի վերջին վայրկյանը անմատչելի մարտնչելով բազմակի անգամ գերազանցող թշնամու ուժերի դեմ եւ երբեմն չլքելով իրենց վստահված դիրքերը:

Ուզում եմ գործի ձեռնարկում

Նարեկ Հովհաննիսյանը երկվորյակ եղբոր՝ Արայիկի հետ, ծնվել է 1992 թվականի սեպտեմբերի 30-ին Հրազդան քաղաքում: Պատերազմական գործողությունների պատճառով է մայրը ժամանակավորապես Հրազդան տեղափոխվել, որտեղ էլ լույս աշխարհ են եկել զույգ որդիները: Հայրը Ասկերանի շրջանի Մոշիմ-հատ գյուղից էր, մայրը՝ Ավետարանոցից, որտեղ անցել է Նարեկի, Արայիկի եւ կրտսեր եղբոր՝ Մովսեսի մանկությունը:

Այնուհետև ընտանիքը տեղափոխվել է Ստեփանակերտ: Դպրոցն ավարտելուց հետո «ճոխտակներ» (երկվորյակներ) ընդունվել են Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջ՝ Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում մասնագիտացմամբ: Եղբայրները սպորտով էին նաև զբաղվում: Նախքան բանակ գորակոչվելը եւ ծառայության տարիներին ծանրամարտ մարզածեում մի շարք պատվավոր հորիզոնականներ են զբաղեցրել:

Սակայն բանակը լրիվությամբ փոխել է Նարեկի նախասիրությունները: 2010 թվականին նա մեկնել է ծառայության:

Մատաղիսում անցկացրած պարտադիր զինվորական ծառայության ավարտից հետո պայմանագրային հիմունքներով է շարունակել ծառայությունը՝ արդեն Թալիշում: Արայիկյան պատերազմից հետո ստացել է սպայի կոչում՝ նշանակվելով հետախուզական դասակի հրամանատար:

2020թ. տեղափոխվել է «Եղնիկներ պաշտպանական շրջան» որպես հետեւակի դասակի հրամանատար:

Նարեկը ռազմական կրթություն չունի, սպայական կոչման էր արժանացել անձնական բարձր որակների, ինքնակրթության եւ մարտում ցուցաբերած ճկունության, ճիշտ որոշումներ կայացնելու ունակության շնորհիվ: Նա ուսումնասիրում էր ռազմական գործը, կարդում համապատասխան գրականություն՝ դրանով լրացնելով բացը, ու կարողանում է կարճ ժամանակում ձեռք բերել հմուտ սպային բնորոշ որակներ: Ինչպես մարտական ընկերներն են վկայում՝ դժվար իրավիճակումներում լույսնիսկ կոչումով բարձր սպաները միշտ նրա առաջարկած տարբերակով էին շարժվում:

Նահանջել չգիտեր ու չէր էլ ուզում իմանալ

Եղբայրը՝ Արայիկը, «Ապառաժ» հետ զրույցում նշել է, որ դպրոցում, ուսումնարանում Նարեկը դասերին շատ ուշադրություն չէր դարձնում, բայց ռազմական գործում այնպիսի բան չկար, որ չիմանար: «Չինվորները պատմում են, որ այդ դասերի ժամանակ բոլոր բաժինները մանրամասն բացատրել է, երբ հասել է տակտիկական նահանջ բաժնին, գիրքը փակել, մի կողմ է դրել, թե մեզ դա պետք չի ու մինչև վերջ էլ չի սովորել: Չինվորները բոլոր հարձակողական, դիվերսիոն գործողությունները հիմնախի գիտեին, բայց միշտ վախենում էին, որ չեն կարողանալու նահանջել»,- պատմում է եղբայրը:

Պատերազմի օրերին Նարեկի գլխավորած խումբը մի քանի անգամ ճեղքել է թշնամու առաջնագիծը, տեխնիկա ոչնչացրել: Նրա դասակը միշտ առանձնանում էր. ընտրում էր ամենաուժեղ, խիզախ զինվորներին, իսկ ինքն էլ միշտ առջեւից էր գնում: Իր հարցազրույցներից մեկում Նարեկի մարտական ընկեր Եղիշե Բոցինյանը վկայում է. «Չկա այնպիսի բառ, որ նկարագրեմ նրանց մարտական ոգին ոնց էր բարձր եղել, ոնց են քաջաբար առաջ գնացել, ամեն խնդիր կատարել: Եթե մարդն իր վիրավոր, երկվորյակ եղբորն ասում է՝ դուրս չգաս, մինչև առաջ չգնանք, հակառակորդին չոչնչացնենք, ինքը միանշանակ հերոս է, ուրիշ մեկնաբանություն չի կարող լինել»:

Նարեկի հետ Հարութ Մնացականյանը ծանոթ էր մանկուց, բայց փաստացի իրական ընկերությունն սկսվել էր

2010թ., երբ երկուսն էլ Մատաղիսում ծառայում էին: «Նարեկն անհանգիստ երիտասարդ է. մի տեղ նստելը նրա համար չէ, հանգիստ կյանքը նրա համար չէ: Միշտ արկածներ փնտրող մարդ է եղել՝ տղաների հետ հարցեր պարզել, դիրքերում առիթ-անառիթ հակառակորդին ճնշել, որսի սիրահար, արագության սիրահար: Անհանգիստ բնավորությամբ երիտասարդ է, ով կյանքում միշտ արկածներ էր փնտրում՝ լավ իմաստով»,- նշում է մարտական ընկերը:

Նախահարձակ գործողությունների կողմակից էր

Լսելով, որ Եղնիկներից 50 հոգի են ուղարկել Քարին տակ, Թովմասն ու Նարեկը վրոզվում են՝ ինչու իրենց չեն ուղարկել հարագատ վայրերը պաշտպանելու:

«Եղնիկների» գործառնի հրամանատար Կարեն Ջավայանից (Ջոխ) թույլտվություն են ստանում մեկնելու, նրանց միանում է նաև Արայիկը:

«Ջոխը Նարեկին ու Թովմասին հանձնարարել էր տեղ հասնելուն պես ստանձնել հրամանատարությունը: Ծանապարհին Նարեկն ասում էր, որ այնտեղ հրետանին, անօդաչուները, շատ են խփում, միակ տարբերակը հարձակվելն է: Հրետանու կրակի տակ չընկնելու համար պետք է անընդհատ հետապնդել թշնամուն: Թովմասն ասում է՝ դուխով երկուսս էլ հավասար ենք, լավ կռվում ենք, բայց որպես սպա դու ինձից խելոք ես, մարտավարությունից լավ ես հասկանում: Նա առաջարկում է, որպեսզի հրամանատարությունը ստանձնի Նարեկը»,- պատմում է եղբայրը: Հետագայում Նարեկի բոլոր կան-

նով շարունակում էր մասնակցել մարտական գործողությանը:

Դեռես Եղնիկներում, երբ գանգել էր փոքր եղբորը՝ Մովսեսին ու վերջինս հայտնել է, որ գյուղը գրավել են, Նարեկի արձագանքը հետեւյալն էր՝ «բա դու ինչո՞ւ ես կենդանի մնացել, եթե գյուղը գրավել են»:

Նարեկի նման հրամանատարների պակաս կար

Վերջին անգամ Արայիկը եղբորը Շուշիի մոտ է տեսել, երբ նրա հանձնարարականով տաք հագուստ ու անկողնային պարագաներ էր տանում Հրազդանում գտնվող ընտանիքին: Մինչ այդ պահը Նարեկի մոտ ընկճվածություն կամ պարտվողական տրամադրություն չի նկատել: Արդեն նոյեմբերի 5-ին հետը խոսելիս Նարեկն ասում է, որ վիճակը լավ չէ, հանձնարարում հուսափառից կռվի ունակ իրենց զինվորներին բերել, բայց հետո պատվիրում սպասել:

«Նոյեմբերի 7-ին գանգում է, կեսօրին ասում է՝ երկու շտապ օգնության մեքենա պատրաստեք, դուք էլ պատրաստ կացեք, տանկի մոտ սպասեք: Ասում է՝ վիրավորները, գոհերը շատ են, ռազմամթերքը վերջացել է լրիվ: Որոշել էին կազմակերպված նահանջել, Նարեկը առջեւից էր գնում, որ ճանապարհը բացի: Բայց ինքը Շուշիի մատույցներից դուրս չի գալիս: Վերջին խոսակցության ժամանակ ասում էր տեխնիկա ուղարկեք, որն այդպես էլ չի ուղարկվում»,- նշում է Արայիկը: Հետո գանգերին չի պատասխանում ու Արայիկը գգում է, որ եղբայրն արդեն չկա:

Նրա զինվորներից սերժանտ Սարգիս Մարգարյանը պատմում է. «Խառը կրակոցների ժամանակ չհասկացանք՝ որ կողմից, ոնց, իմ դիմաց էր նստած, գոհվեց ու ընկավ դեպի ձորը»: Բայց մոտակայքում գտնվող չորս զինվորները չգիտեին, որ գոհվել է ու նրա հետեւից ձորը վազեցին:

Արայիկի կարծիքով՝ այս պատերազմում իսկական հրամանատարների պակաս կար: «Չինվորը ամեն տեղ էլ զինվոր է, կամավորն էլ նույնպես: Վախկոտ հրամանատարի զինվորներն էլ վախկոտ են դառնում, իսկ առյուծ հրամանատարը բոլորին իր նման առյուծ է դարձնում»: Նրա կարծիքով՝ կռվից փախած, վախկոտ սպան չպետք է լինի հրամայողի դերում: Պետք է բարձրագույն պաշտոններում տեղ տալ միայն հրամանավորներին: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի վիճակը փոխել ու հաղթանակի կերտման մասին մտածել:

Նարեկը գոհվել է նոյեմբերի 7-ին, իսկ դիակը նոյեմբերի 15-ին են դուրս բերել: Նա մոտոք փաստաթուղթ էր պահում, «Nokia» հեռախոսը, կնոջ ևսանկը եւ իր զինվորների ձեռագիր ցուցակը մոտն էին, բայց սմարթֆոնն հեռախոսը չկար: Այդ հեռախոսի ձայնագրությունը միշտ միացրած էր, նույնիսկ մարտերի ժամանակ եւ Նարեկն ասում էր, որ կռվից հետո շատ մարդու ներք է գցելու: Տանը պահվող հեռախոսի փաստաթղթերի միջոցով պարզել են, որ նոյեմբերի 15-ին երեկոյան հեռախոսը Ստեփանակերտում միացրել են ու անջատել: Ի՞նչ տեղեկություն կար հեռախոսի մեջ, ո՞ր մոտ է այն, դեռես պարզ չէ:

Պարտավորեցնող գոյություն

Նոյեմբերի 7-ի առավոտյան Նարեկը եւ ընկերները գանգել են հարագատների, վերջին անգամ խոսել նրանց հետ, բայց բոլորի ձայնն էլ տարօրինակ էր:

«Վերջին անգամ խոսել են ամսի 6-ին, ինքն արդեն գիտեր, որ դիրքը չի թողնելու: Իմ հիշողության մեջ տպավորված է, որ նոյեմբերի 7-ի առավոտը իր հետ խոսել եմ, այսինքն՝ փորձել է խոսել: Չանգել է, բայց կապերի պատճառով չենք կարողացել խոսել: Բայց 6-ին մենք երկար խոսել ենք, կես ժամից շատ, ինքն ասել է, որ չի գալու: Չնայած խոսք է տվել, որ գալու է, ձայնից էլ, իր խոսելուց էլ հասկացալ եմ, որ սա արդեն վերջին խոսակցությունն է»,- նշում է Նարեկի կինը՝ Կարինե Հովհաննիսյանը:

Կարինեի համար շատ դժվար էր պատերազմից հետո Արցախ վերադառնալու որոշումը կայացնել, մտածում էր՝ արդյո՞ք այստեղ իրենց զավակների՝ Արայիկի ու Սառայի անվտանգությունն ապահովված է: «Բայց այստեղ ապրելը պարտավորեցնող է: Ես ուզում եմ բալիկներս իմանան, որ սա իրենց հողն է ու իրենց հայրը պաշտպանել է, մինչև վերջ կանգնել ու պաշտպանել է այն: Թեկուզ ասել են՝ նահանջիր, այդ տարածքն արդեն մերը չի, ինքը մինչև վերջ կանգնել է ու պաշտպանել իր հողը: Ես ուզում եմ, որ դա իմ բալիկներն իմանան ու միշտ հպարտանան, ինչպես որ ես եմ հպարտանում», - ասում է նա:

2021 թվականի ապրիլի 5-ին Հայրենիքի պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում Արցախի Հանրապետությանը մատուցած բացառիկ ծառայությունների, ցուցաբերած քաջության ու անձնական արիության համար Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի N գործառնի 3-րդ հրաձգային դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Նարեկ Հովհաննիսյանին եւ N գործառնի դիպլոմատների դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Թովմաս Թովմասյանին հետմահու շնորհվել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչում՝ «Ոսկե արծիվ» շքանշանով:

Տարեկի ԱՐԱՋԱՆՅԱՆ



խառնածներն իրականանում են: Զանի դեռ թշնամուն մոտ էին, իրենց ուղղությամբ հրետանի չի աշխատում:

Հասնելով Քարին տակ, խումբը տեսնում է, որ ոչ մեկը մյուսի տեղը չգիտի: Նարեկը իսկույն հավաքում է հատուկ նշանակության ջոկատների, կամավորների, աշխարհագրորայինների հրամանատարներին եւ սկսում համակարգել գործողությունները: Նա նախահարձակ գործողությունների կողմակից էր: Տեղ հասնելով եւ ուսումնասիրելով իրավիճակը, առաջարկում է այդպիսի գործողություններով ճնշել թշնամուն, բայց բարձրագույն հրամանատարության կողմից այս առաջարկները կամ հավանության չեն արժանանում, կամ էլ մի քանի ժամ անց արդեն ժամանակավրեպ են դառնում:

Կռվում իմ ճանաչած Նարեկը չէր, լրիվ ուրիշ մարդ էր

Մարտի դաշտը Նարեկի տարերքն էր, իսկ բանակում նա լրիվությամբ փոխվել էր: «29 տարեկան էինք, 30 տարի իրար հետ ենք ապրել: Ես ինձ ֆիզիկապես ավելի ուժեղ էի համարում Նարեկից: Բանակից հետո նա սպորտը թողել է: Ես միշտ ասում էի՝ քեզից ավելի երկար կվազեմ, ավելի շատ ձգում կանեմ, ավտոմատով ինձից լավ չես կրակում: Ասում էի՝ քեզից ամեն ինչով առավել եմ: Կռվող սկսվելուց հետո հասկացել եմ, որ՝ ոչ, ինքը խելոք է, համարձակ է. նույնիսկ վազքով չէի կարողանում հետեւից հասնել, ոնց որ ուրիշ մարդ լիներ: Կռվում իմ ճանաչած Նարեկը չէր, լրիվ ուրիշ մարդ էր»,- ասում է Արայիկը:

Նարեկը մարտի դաշտում վճռական էր, անդրդվելի ու անվախ: Մարտի ընթացքում չէր թողնում մոտենալ ծանր վիրավորին, գոհին, ասում էր՝ առաջ շարժվեք: Նույնիսկ մտերիմ ընկերոջը՝ Բոցինյանին, ծանր վիրավորվելուց հետո, չի թողնում մոտենալ: Միայն գործողության ավարտից ու հետ դառնալուց հետո են իրենց հետ տանում: «Նրա համար կապ չունեի» եղբայրն էս, ընկերը կամ զինվորը. եթե ծանր վիրավորվել ես, փրկություն չկա, վերջ, քո պատճառով մարդ չի գաղտնանում»,- պատմում է Արայիկը, ով նույնպես վիրավորվելուց հետո Նարեկի հրամա-

Կոտրված սրտով, սակայն ձեզ նման տոկուն կամքով կրկին ձեզ հետ եմ

Առաջին անգամ Չաքար Բեշիշյանը Արցախ էր ժամանել 1988-ին, Երեւանից՝ մի խումբ ուսանողների հետ համերգներ տալու, եւ առաջին հայացքից սիրահարվել էր Արցախին: Այդ օրից ի վեր նա տարվա 10 ամիսը Լիբանանում է, իսկ մյուս 2 ամիսը՝ Շուշիում, այժմ՝ Ստեփանակերտում: Հորից ժառանգաբար փոխանցված սերն առ երաժշտություն նրան ստիպում է ե՛լ Լիբանանում, ե՛լ Արցախում գրադպել նույն գործով:

Չաքար Բեշիշյանը, հավատարիմ մնալով ՀՀ-ի «Դեպի երկիր» կոչին, 29 տարի առաջ եկավ Շուշի, որտեղ եւ հիմնեց «Վարանդա» երգչախումբը:

«Ապառաժ»-ը գրուցել է Չաքար Բեշիշյանի հետ՝ պատերազմից հետո նրա ապրումների եւ Արցախում նրա ծրագրերի մասին:

- Ի՞նչն է ձեզ ամեն անգամ Արցախ բերում:

- Իմ հայկական պատկանելությունն ու հայեցի դաստիարակությունը:

- Դուք ամեն տարի լինում էիք Արցախում: Ինչպիսի՞ր զգացողություններ ունեիք այս անգամ՝ պատերազմից հետո Արցախ մուտք գործելիս:

- 29 տարի անընդհատ գալով Արցախ՝ այս անգամ ինձ համար սուկալի ծանր էր գալ Արցախ, անցնել Շուշիի տակով եւ չմտնել Շուշի, անցնել այն ճանապարհով, որտեղ մենք բազմաթիվ նահատակներ ենք ունեցել: Սակայն գալով Արցախ, շփվելով արցախցի մեր հայրենակիցների հետ՝ հոգեփոխվեցի, խաղաղվեցի, հավատով լցվեցի վաղվա օրվա հանդեպ ու սկսեցի աշխատանքները երգչախմբի հետ:

- Ինչպե՞ս ստեղծվեց «Վարանդա» երգչախումբը:

- «Վարանդա» երգչախումբը ստեղծել եմ Շուշիի ազատագրած տարում: Այդ ժամանակ ստեղծեցիք «Արամ Մանուկյան» վարժարանը, որի հիմնադիրներից եմ: Այդտեղ ունեինք մշակութային խմբեր, որոնցից մեկն էլ «Վարանդա» երգչախումբն էր: Այդ օրից ի վեր՝ ամեն տարի ես 2 ամիս նվիրում եմ երգչախմբին՝ պատրաստելով նոր համերգներ՝ նոր երգացանկով: Այս 29 տարիների ընթացքում ստեղծվել են 164 երգեր երգչախմբի

համար: Երգչախումբը համարվում է Բեյրութի համազգային իմ «Այգ» երիտասարդական եւ «Կարկաչ» մանկապատանեկան երգչախմբերի քույր երգչախումբը, որոնց հետ միացյալ համերգներ ենք ունեցել Լիբանանում, Երեւանում եւ Գյումրիում:

- Այժմ ի՞նչ վիճակում է «Վարանդա» երգչախումբը:

- «Վարանդա» երգչախմբից 30 հոգի են այստեղ, մնացածները, դժբախտաբար, Արցախում չեն: Մոտ 50 հոգի տակավին Երեւան, Գորիս, Էջմիածին եւ Գյումրի քաղաքներում են հաստատված: Սակայն նրանք, ովքեր այստեղ էին, այդ հիմքի վրա հավաքեցին Ստեփանակերտի տարբեր երաժշտական կամ արվեստի եւ հանրակրթական դպրոցից աշակերտներ՝ տրված հայտարարությունից հետո: Շուրջ 90 հոգանոց երգչախմբով մենք կազմակերպեցինք մեր համերգը:



- Ինչպիսի՞ր ծրագրեր կյանքի կոչեցիք Արցախում:

- Այս տարի, երբ մենք կորցրինք Շուշին, Արցախում իմ ծառայողական ձեռագրի փոխվեց: Օգոստոսի 25-ին Ստեփանակերտի մշակույթի պալատում կայացավ «Ղուղանց հիշատակի, երախտիքի ու վերապրումի» խորագրով համերգային ծրագիրը: Համերգին ելույթ ունեցավ Շուշիի «Վարանդա» երգչախմբի երիտասարդական կազմը, ես՝ դաշնակահար Նադեժդա Սարգսյանի նվագակցությամբ:

Թեեւ կոտրված սրտով, սակայն ձեզ նման տոկուն կամքով կրկին ձեզ հետ եմ՝ ձեզ հետ ապրելու, արարելու, ոգեւորվելու, զորանալու, մեր հավաքական ու ավանդական լավատեսությունը, պայծառամտությունը, հույսն ու հավատը, պայքարելու ու կորցրածը հետ բերելու կամքն ու կորովը վերագտնելու:

- Ո՞րն էր համերգի ուղերձը:

- Համերգը հիշատակի հուշ-երեկո էր, երախտիքի խոսք այստեղ ապրող մեր հայրենակիցներին, ովքեր այստեղ ապրելով՝ պահում են այս հողը եւ վերապրում, որովհետեւ պատերազմից հետո, մեզ պարտադրված «պարտությունից» հետո մեր երկիրը վերակերտելու կարիք ունի:

Համերգն առաջին հերթին իմ հոգու ճիչն էր, իմ հարգանքի ու երախտագիտության, իմ խոնարհումի արտահայտությունն էր բոլոր այն նահատակների հիշատակի համար, ովքեր գերազանց զոհողությամբ, կյանքի գնով գեներ ձեռքներին ելան պաշտպանելու մեր հայրենիքն ու արժանապատվությունը: Իմ խոնարհումն ու հպարտությունը նաեւ բոլոր այն քաջերին, որոնք, ընկածներին

զենքն ու զրահը վերցրած, այսօր էլ խորիտ կանգնած են մեր հայրենիքի եզերքին՝ անվեհեր, պատվի պաշտպանությանն ի խնդիր: Եվ, վերջապես, իմ խոնարհումն ու հպարտությունը Արցախում ապրող, հայրենի հողը չընդ, մեր վաղվա պայծառ օրվա նկատմամբ հույսն ու հավատը չկորցնող, ատամները պինդ սեղմած, անպարագծելի կորուստն ու ցավը արժանապատվորեն գրկած, բայց արցախցու անկոտրում ու հնավանդ կամքն ու ոգին իր մեջ ամբարած, «կռուղուպուր» իմ պաշտելի հայրենակից-

ների նկատմամբ: Հաջորդ համերգը կայացել է սեպտեմբերի 2-ին, որը ԱՀ ԿԳՄՍ նախարարության կողմից որոշեցվել է որպես Արցախի անկախության 30-ամյակի զխավոր միջոցառում: Ամսի 3-ին կրկնել ենք համերգը, իսկ ամսի 6-ին, 7-ին, 8-ին ելույթներ կունենանք աշակերտների համար:

- Ինչպիսի՞ր երգացանկով է հանդես եկել երգչախումբը:

- Երգացանկն ընտրել եմ երգչախմբի համար անցնող 29 տարիների ընթացքում գրված այն երգերից, որոնք հնչել են գուցե 15-20 տարի առաջ: Սա լավ առիթ է վերստին այդ երգերը հնչեցնելու համար:

- Վերջերս հասարակական դաշտում շատ են քննարկումները եւ քննադատությունները Արցախում կազմակերպվող համերգների շուրջ: Ո՞րն է ձեր տեսակետը այս հարցի շուրջ:

Իմ կարծիքով, բոլոր ձեռնարկները պետք է պատշաճ մակարդակի լինեն: Հիմա «տաշի-տուշի» համերգներ կազմակերպելու ժամանակը չէ: Համերգները պետք է ունենան բովանդակություն, որոնք համապատասխանում են այսօրվա մեր իրականությանը, որովհետեւ ամեն մի համերգ արտահայտություն է այն կացության, որի մեջ ապրում է տվյալ ժողովուրդը: Խոսքն, իհարկե, արվեստի լուրջ համերգների մասին է, ոչ թե՛ ռաբիզ:

Մեր համերգային ծրագրերը իրենց բովանդակությամբ համապատասխանում են մեր առօրյային, որոնք մեզ լիքացվորելու են ապրելու, արարելու ուժով եւ, ի վերջո, հաղթելու եռանդ ու հույս են տալու:

- Ինչպե՞ս եք տեսնում ստեղծված իրավիճակից ելքն ու մեր ապագան:

- Շուշին ու Հադրութը վերստին ազատագրելու գաղափարախոսությունը շարունակում է Վանը, Մուշը, Սատուկը ազատագրելու գաղափարախոսությունը: Եթե մենք հավատում ենք Միացյալ Հայաստանի գաղափարին եւ նվիրված ենք այդ գաղափարին, վաղ թե ուշ հասնելու ենք այդ նպատակին: Իսկ նրանք, ովքեր չեն հավատում, արդեն կորցրել են այդ հողերը:

Վ. ԿԱՉԱՏՐՅԱՆ

Արցախի 106 դպրոցներում հնչել է առաջին զանգը

2021թ. սեպտեմբերի 1-ին Արցախի դպրոցներում առաջին դասարան է հաճախել 1903 աշակերտ, որից 1003-ը՝ Ստեփանակերտում: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարի տեղակալ Միքայել Համբարձումյանը: Նախորդ տարվա հետ համեմատ՝ առաջին դասարանիների թիվը նվազել է մոտ 22%-ով:



Արցախի Հանրապետության վերահսկողության տակ մնացած 108 դպրոցներից 106-ում հնչել է առաջին զանգը: «Հանձնված տարածքներում գործում էր 109 դպրոց, իսկ մեր վերահսկողության տակ մնացած տարածքներում չեն գործում Բերձորի երկու դպրոցները, Ներքին Սուսի, Փառուխի, Ազնեցի դպրոցները: Քաշաթաղի շրջանում միայն Ազնեցի դպրոցն է աշխատում, իսկ Շահումյանի շրջանում՝ Ավնաբերդի դպրոցը», - ասել է Մ. Համբարձումյանը:

դասարանիներին 20000-ական դրամ է հատկացվել: Իսկ Արցախում առաջին դասարան հաճախած աշակերտների համար «Կարմիր խաչի» կողմից պայուսակներ են տրամադրվել: Նա դժվարացավ նշել տեղահանված առաջին դասարանիների հստակ թիվը, քանի որ բոլոր շրջաններից համապատասխան տեղեկատվությունը դեռեւս չեն ստացել:

տիքներ կան: Ըստ Միքայել Համբարձումյանի, խնդիրը նրանում է, որ ուսուցիչները կենտրոնացած են կամ շրջաններում, կամ էլ Ստեփանակերտում. տեղեր էլ կան, որ ժամաքանակները քիչ են: Այժմ գործող բազմաթիվ դպրոցների թափուր տեղերի համար առաջիկայում հայտարարություններ կլինեն նախարարության էջում:

Վահագն ԿԱՉԱՏՐՅԱՆ

Բողոքի ակցիա՝ ընդդեմ կեղծ ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ոտնահարման

ՀՀ-ի Արցախի երիտասարդական միության նախաձեռնությամբ սեպտեմբերի 15-ին՝ ժողովրդավարության միջազգային օրը, ԱՀ արտաքին գործերի նախարարության շենքի դիմաց կազմակերպել է բողոքի լուռ ակցիա՝ ընդդեմ կեղծ ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ոտնահարման:

Ակցիայի մասնակիցները պարզել էին «Մարդու իրավունքներ», «Չկա արդարություն, չկա խաղաղություն», «Ձեր լուռությունը նոր ցեղասպանություն է», «Ո՛ր է իմ ազատությունը, ո՛ր է իմ իրավունքները», «Կույր մի՛ եղեք», «Որտե՞ղ է ձեր մարդասիրությունը» եւ այլ գրություններով պաստառներ:

«2007թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված օրը խորհրդանշում է ժողովրդի ազատական արտահայտումը, մարդու իրավունքներն ու ազատությունները: Սակայն 44-օրյա պատերազմը, մեր ժողովրդի իրավունքների եւ ազատությունների բացահայտ ոտնահարումը եւ այդ ամենի նկատմամբ շարունակվող անտարբերությունն ու լուռությունը մեզ թույլ են տալիս ասելու, որ գործում են ժողովրդավարության երկակի չափանիշներ:

1988թ. սկսված Արցախյան շարժման հաղթանակով համայն հայությունը կարողացավ դուրս բացել դեպի ազատություն՝ վերագտնելով Արցախի եւ Հայաստանի անկախությունը: Հայ ժողովուրդը, հավատարմորեն միջազգային իրավունքում ամրագրված ազգերի ինքնորոշման, ազատ պարելու իրավունքներին, հռչակեց իր անկախությունը միջազգային բոլոր օրենքներին համապատասխան, միջազգայնորեն ընդունված ձեռնարկ՝ հանրաքվեի միջոցով:

Սակայն 30-ամյա մեր պայքարում Արցախն ու արցախցին դուրս մնացին միջազգային հանրության ուշադրության կենտրոնից: Խիստ մարդասեր Եվրոպան

աչք էր փակում տարիներ շարունակ Ադրբեջանի կողմից իրականացվող անմարդկային արարքների վրա: Չճանաչելով Արցախի անկախությունը՝ միջազգային հանրությունը հող նախապատրաստեց Ադրբեջանի սանձարձակ գործողությունների համար: 2016-ի քառօրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից խաղաղ ժողովրդի խոշտանգումները, հայ զինվորների գլխատումները չհատապարտելը հանգեցրին 2020թ. Ադրբեջանի կողմից 44-օրյա պատերազմի սանձազերծմանը:



Այդ պատերազմի ընթացքում դաժանաբար սպանվում էր մի ողջ ազգի կորիզ, բռնի տեղահանվում էին հազարավոր արցախցիներ: Սակայն միջազգային հանրությունը լուռ էր: Կոչեր էին հնչում, բաներ էին ասվում բարձր ամբիոններից կեղծ մարդասիրության քողի տակ: Միջազգային հանրության հանցավոր լուռությունն այսօր հանգեցրեց համամարդկային մեծ աղետի՝ Արցախի տարածքների բռնազավթման եւ բնակչության տեղահանման տեսքով:

ՀՀ-ի ԱԾԻ-ը դատապարտում է միջազգային հանրության հանցավոր ու մեղսակից լուռությունը, վարվող ջայլամային քաղաքականությունը: Համամարդկային ամենաբարձր արժեքների ջատագովմն ու քարոզիչ երկրները, գայթակղվելով ադրբեջանական նախընտրած սկզբունքները: Դադարե՞ք երկակի ստանդարտներ կրել: Ամո՞թ ձեզ՝ ձեր լուռության համար», - նախքան լուռ ակցիայի սկսելը ասել է ՀՀ-ի ԱԾԻ-ի անդամ Լարիսա Ներսիսյանը:

ԱՀ Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը մեզ հետ զրույցում նշեց, որ այս ակցիան կարելի է այն առումով, որպեսզի աշխարհին եւս մեկ անգամ հիշեցնենք, որ Արցախում ապրող մարդը հավատարիմ է մարդու իրավունքների եւ ազատության: Ների պաշտպանությանը եւ, ի վերջո, ժողովրդավարական երկրները պետք է տեր կանգնեն Արցախի ժողովրդի իրավունքներին, որովհետեւ մարդու իրավունքներն ու ազատությունը համընդհանուր է, անկախ նրանից, թե մարդն աշխարհի որ կետում է ապրում:

ՀՀ-ի ԱԾԻ-ի ներկայացուցիչ Վահագն Խաչատրյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ ակցիայի հիմնական հասցեատերը միջազգային հանրությունն է:

«Մեզ համար այդքան էլ տարօրինակ չէ

միջազգային հանրության անտարբեր քաղաքականությունը: Հայացք նետելով մեր անցյալին, տեսնում ենք, որ թե՛ Հայաստանի շարժերը, թե՛ Հայոց ցեղասպանությունը, թե՛ Շուշիի կոտորածը, թե՛ Սումգայիթի ու Բաքվի ջարդերը եւ թե՛ արցախյան 3 պատերազմներում թուրքերի վայրագությունները իրականացվել է միջազգային հանրության աչքի առջեւ ու նրանց լուռ համաձայնությամբ», - ասել է Վահագն Խաչատրյանը:

Նրա կարծիքով, 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում աշխարհի կեղծ մարդասիրությունն ու հումանիզմը վերջնականապես կնքեցին իրենց վախճանը:

«30 տարի առաջ Արցախը հռչակեց իր անկախությունը՝ ընտրելով ժողովրդավարության ուղին, հիմնվելով ազգերի ինքնորոշման իրավունքի վրա: Սակայն աշխարհի կողմից այդ փաստի անտեսումը հանգեցրեց հետագա բոլոր այն ոճրագործություններին, որոնք իրականացվել են Ադրբեջանի կողմից այս տարիների ընթացքում եւ որն իր դաժանության գագաթնակետին հասավ 2020թ. սեպտեմբերի 27-ից հետո», - նշել է նա:

Նրա խոսքով՝ այսօր, երբ հազարավոր մեր հայրենակիցներ գրկվել են իրենց բնակավայրերից եւ ունեցվածքից, խախտվել է հազարավոր մարդկանց ապրելու իրավունքը, դաժանաբար սպանվել են հազարավոր երիտասարդներ, հազարավոր երեխաներ գրկվել են իրենց ծնողներից, խախտվել է Արցախի տարածքային ամբողջականությունը, անխմաստ է խոսել ժողովրդավարությունից եւ մարդու իրավունքներից:

«Մենք այսօր այստեղ ենք՝ դատապարտելու աշխարհում գործող երկակի ստանդարտներն ու միջազգային հանրության հանցավոր լուռությունը», - եզրափակել է նա:

Ապառաժ

Եվրոպան կարթնանա, բայց ուշ կլինի

Եվրոպական պետությունների անտարբերությունը բերեց Բյուզանդական կայսրության կործանմանը: Երբ անդրադառնում ենք հզոր Բյուզանդական կայսրության կործանմանը, ապա պատմությունից ի հայտ է գալիս այն երևույթը, որը տեղի է ունեցել 1095 թվականին: Ֆրանսիական Կլեմեն քաղաքի մոտ գտնվող ընդարձակ հարթավայրում ժողովրդի վիթխարի ամբոխի առջեւ ելույթ է ունեցել Հռոմի պապը:

Նա կոչ է արել հավաքվածներին՝ «Մեջքին սուր կապել» եւ շարժվել դեպի արեւելյան երկրները, «տիրոջ գերեզմանը փրկել անհավատներից»՝ մուսուլմաններից:

Ըստ քրիստոնեական ավանդության՝ Պաղեստինի Երուսաղեմ քաղաքում է թաղված Հիսուս Քրիստոսը: Հռոմի պապը խոստացավ արշավանքի բոլոր մասնակիցների ամբողջ մեղքերը ներել:

11-րդ դարի վերջին, որ լի էր ֆեոդալական պատերազմներով եւ տարերային աղետներով, Եվրոպան ապրում էր «յոթ անբերրի տարիներ»՝ անբերքատվության, անասունների անկման, զանգվածային համաճարակների երկար տարիներ:

Գյուղացիները քաղցում էին, իսկ ֆեոդալները ձգտում էին ավելացնել ծանր հարկերը:

Իրենց տերերից ազատվելու ելքը գյուղացիները տեսնում էին դեպի այնտեղ պապի կողմից նախաձեռնված արշավանքներում:

Արեւմտյան ֆեոդալները իրենց հայացքն ուղղել էին դեպի արեւելյան երկրները, որոնց ծով հայտարարության մասին նրանք լսել էին վաճառականներից եւ ուխտավորներից: Ֆեոդալները փափագում էին թալանել արեւելյան հարուստ քաղաքները եւ հողային նոր տիրույթներ ստեղծել Արեւելքում:

11-րդ դարում Արեւմտյան Եվրոպայում երեւան եկան շատ հողագուրկ ասպետներ, որոնք հիմնականում ֆեոդալների կրտսեր որդիներն էին, ովքեր որպես ժառանգորդ ոչինչ չէին ստացել՝ բացի ծիսից ու գնեքից: Նրանց գլխավոր զբաղմունքը պատերազմն ու ավազակությունն էր: Եվ ասպետներն էին կազմում խաչակրաց արշավանքների գլխավոր ուժը:

Արեւելքում նոր տերություններ ձեռք բերելու մասին երազում էին հողեւորականները: Հռոմի պապը ցանկանում էր՝ արեւելյան երկրներն իրեն ենթարկելով ավելի ուժեղացնել իր իշխանությունը եւ ավելացնել եկամուտները:

1096թ. աշնանը Ֆրանսիայից, Գերմանիայից եւ Իտա-

լիայից տարբեր ուղիներով խոշոր ֆեոդալների ղեկավարությամբ դեպի արեւելք շարժվեցին ասպետների ջոկատները: Սակայն «Տիրոջ գերեզմանի փրկիչները» այնքան էլ չէին շտապում դեպի իրենց նպատակը: Ծանապարհին նրանք զավթում էին քաղաքներ, թալանում ու սպանում էին տեղական բնակիչներին: Հաճախ կողոպուտը բաժանելու ժամանակ ջոկատների առաջնորդների միջեւ ընդհարումներ էին տեղի ունենում:

Եռամյա արշավանքներից հետո խաչակիրների միայն մեկ հիկեթորոգ մասը մոտեցավ Երուսաղեմին: Ծառերն սպանվեցին ճանապարհին կամ մնացին զավթված հողերում: Իսկ շատերը վերադարձան հայրենիք:

Խաչակիրները տիրեցին Սիրիայի եւ Պաղեստինի ծովափնյա հողերին ու ստեղծեցին իրենց պետությունը: Խաչակիրների պետությունները միմյանց հետ թշնամական հարաբերությունների մեջ էին: Արեւելքից ու հարավից խաչակիրներին ճնշում էին մուսուլմանական իշխանությունները:

Նրանց դեմ պայքարելու համար արեւմտյան ֆեոդալները ձեռնարկեցին երկրորդ արշավանքը, սակայն լիակատար անհաջողության մատնվեցին: Ծուռով մուսուլմաններն ստեղծեցին ուժեղ պետություն, որը գլխավորում էր Եգիպտոսի տիրակալ Սալադինը: Նա ջախջախեց խաչակիրներին եւ նրանց դուրս բռնեց Երուսաղեմից: «Սուրբ քաղաքը» վերադարձնելու նպատակով արեւմտյան ֆեոդալները կազմակերպեցին խաչակիրների 3-րդ արշավանքը, որը գլխավորում էին Անգլիայի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի թագավորները: Սակայն այդ արշավանքներն էլ անհաջողությամբ ավարտվեցին:

Խաչակիրների 4-րդ արշավանքը 12-րդ դարի վերջին իր վրա վերցրեց Հռոմի 3-րդ պապը: Նա որոշեց Պաղեստին հասնել ծովով: Նրանք նավեր վարձեցին ծովերի թագուհուց՝ Վենետիկից:

Այն ժամանակ Վենետիկը կատաղի պայքար էր մղում Բյուզանդական կայսրության դեմ: Վենետիկի վաճառականները վարուց էին երազում բյուզանդացիներին այնպիսի հարված հասցնել, որից նրանք չկարողանան ուշքի գալ: Նրանք որոշեցին դրա համար օգտագործել խաչակիրների ռազմական ուժերը:

Վենետիկի խորամանկ ու հաշվեկատ տիրակալը ասպետներին համոզեց միջամտել Բյուզանդիայի ներքին կայծերին, որտեղ այդ ժամանակ սուր պայքար էր գնում գաղութարկական թագի համար:

«Տիրոջ գերեզմանի փրկիչները» այդպես հայտնվեցին

քրիստոնեական քաղաք Կոստանդնուպոլսի պարիսպների տակ: 1204թ. խաչակիրները գրոհով տիրեցին Բյուզանդական մայրաքաղաքին: Ներխուժելով քաղաք՝ նրանք սկսեցին թալանել ու ավերել պալատները, տաճարները, վաճառականները՝ պահեստները, իսկ բնակիչները՝ տները:

Չրդեհեցին հին գրապահարանները եւ ձեռագրերը: Ոչնչացրին արվեստի թանգարանների գանձերը, որոնք հարյուրավոր տարիներով պահվում էին Կոստանդնուպոլսում: Արեւմտյան բարբարոսները թալանեցին սուրբ Սոֆիայի տաճարը:

Կողոպուտին մասնակցում էին նաեւ խաչակիրների եպիսկոպոսներն ու քահանաները: Խաչակիրների արշավանքներից հետո բյուզանդական կայսրությունն անկում ապրեց: Սելջուկ թուրքերը, օգտվելով կայսրության թալանից, 1453թ. 53 օր պաշարեցին քաղաքը, որից հետո Բյուզանդական կայսրությունը դադարեց գոյություն ունենալ...

Եվ հեռու չէ այն ժամանակը, երբ ամբողջ Եվրոպական պետությունները, այսինքն՝ քրիստոնեությունը կճնշի մահմեդականությանը: Այդ մասին դեռեւս չեն գիտակցում Եվրոպական պետությունները՝ Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան, Պորտուգալիան, Բելգիան եւ մյուս երկրները, որոնք ընդունում են մուսուլմանների, առանձնապես՝ Թուրքիային, որ դեռեւս 20-րդ դարի սկզբին ծրագրել էր Մեծ Թուրանի ստեղծումը, որի տարածքը պետք է սկսվի Եվրոպայից եւ հասնի մինչեւ Ալթայ, եւ որի տարածքը պետք է 11 միլիոն քառ. կմ լինի: Բայց արդեն 21-րդ դարի վերջին այլեւս չեն լինի Գերմանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի եւ Եվրոպական այլ տերությունների ստեղծած արվեստի դարավոր արժեքները, կոթողները, եկեղեցիները, քանզի ներկա դրությամբ բացահայտորեն Իսլամական պետությունն իր ճանապարհին ոչնչացնում է Իրաքում եւ Սիրիայում դարերով ստեղծված քրիստոնեական արվեստի կոթողները:

Եվ հեռու չէ այն ժամանակը, որ քրիստոնեական արվեստի ավերված կոթողների տեղը վեր կխոյանան մզկիթներ, եւ եթե մնա գեթ մեկ եվրոպացի, ապա նրան կհամարեն օտարական, որով էլ պետք է հետաքրքրվեն պատմաբանները, թե ինչպե՞ս է այս քրիստոնյան ի հայտ եկել Եվրոպայում: Եվ եթե անգամ նա դիմի օրենքին, ապա չի կարող ապացուցել, որ նրա նախնիները դարեր շարունակ բնակվել են Եվրոպայում:

Դավիթ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Հայրենիքի մեջ մի ամբողջ հարստություն կա, որի համար ենք մենք կռվել

Պատերազմից գրեթե մեկ տարի հետո մենք դեռ ապրում ենք պատերազմով, փորձում հասկանալ ցավալի պարտության պատճառները: Մեր պատմությունը միշտ էլ միահյուսված է եղել պատերազմների, եւ այդ պատերազմների արդյունքում մենք ոչ միայն տարածքներ ենք կորցրել, այլեւ մեր մշակութային արժեքներն են վտանգված եղել:

Այս մտորումներն են ինձ տարել գեղանկարիչ, ազգագրագետ Լուսիկ Ազուլեցու տուն-թանգարան, որի ստեղծման ու հավաքածուի կարելությունը, ինչպես նաեւ վերոհիշյալ մտորումների մասին գրուցել եմ Լուսիկ Ազուլեցու դատեր՝ Աստղիկ Մանվելյանի հետ՝ փորձելով հասկանալ ազգային մշակույթի դերը մեր գոյակերպի լինելիության հարցում:

Լուսիկ Ազուլեցու տուն-թանգարանի ամբողջ հավաքածուն մի կնոջ նվիրում է ժողովրդական մշակույթի արժեքների հավաքագրման միջոցով, որի նպատակը հայկական տարբեր գավառներով, շուրջ 50 տարի հավաքագրել է մշակութային արժեք ունեցող իրեր՝ զենքեր ու զարդեր, շամշիկներ, ձեռագրեր, գորգեր, կարպետներ, օրորոցներ, փայտե, կավե եւ մետաղե կահ-կարասի եւ, իհարկե, 19-րդ դարի հայ արծաթագործ վարպետների բացառիկ մասունքներ, որոնք ապացուցում են, որ հայ ժողովուրդը միշտ արարող, պատմական մշակույթ կերտող հնագույն ազգ է:

Աստղիկի պատմելով, մայրը՝ Լուսիկ Ազուլեցին, իր ամբողջ գիտակցական կյանքում ապրել ու արարել է հայկական մշակույթի պահպանման ու տարածման գործով՝ որպես հավատամբ ունենալով հետեւյալ խոսքերը. «Իմանալով անցյալը՝ ապրում ես ներկայով՝ կերտելով ապագան»: Իր պատմական հայրենիքի՝ Ազուլիսի կորստից ու հայաթափումից հետո նա, շրջելով հայկական տարբեր գավառներով, շուրջ 50 տարի հավաքագրել է մշակութային արժեք ունեցող իրեր՝ զենքեր ու զարդեր, շամշիկներ, ձեռագրեր, գորգեր, կարպետներ, օրորոցներ, փայտե, կավե եւ մետաղե կահ-կարասի եւ, իհարկե, 19-րդ դարի հայ արծաթագործ վարպետների բացառիկ մասունքներ, որոնք ապացուցում են, որ հայ ժողովուրդը միշտ արարող, պատմական մշակույթ կերտող հնագույն ազգ է:

Հավաքածուի մեջ հատուկ տեղ է գրավում ժողովրդի կենսապահովման եւ ինքնադիմացման ձեռքից մեկը՝ տարազը, որով հայ կանայք պահել են ազգային գեղագիտական դարավոր ավանդույթները: Այս առումով Լուսիկ Ազուլեցին եզակի էր, քանի որ իր ողջ կյանքի ընթացքում կրել է ազգային տարազ:

- Ամեն ինչ սկսվեց ինչպես նվիրած արծաթե գոտուց, որ ամենաթանկ նվերն էր մորս՝ Լուսիկ Ազուլեցուն: Գոտին կապել են ամուսնության ժամանակ եւ ցույց են տվել տղամարդկանց հեղինակությունը: Կանանց զլխազարդերը, ճարմանդները, ապարանջաններն ընդգծել են կնոջ վեհությունն ու անհատականությունը, իսկ զարդերի հմայական ուժը կապված էր երկրային պտղաբերության, արգասաբերության հետ,- պատմում է դուստրը:

Այն հարցին, թե ինչու այդքան էլ ընդունված էր ավանդական հագուստների, զարդերի մշակույթի հան-

դեպ հետաքրքրությունը մեր օրերում, Աստղիկ Մանվելյանն ասում է.

- Սկսած խորհրդային միության ժամանակներից՝ ազգային մտածողությունը փորձեցին սպանել մեր մեջ, մենք դեգրադացվեցինք, ազգային մտածողությունը կորավ: Որպես ազգ՝ չկայինք: Մենք չգիտեինք մեր տարազների, մեր մշակութային արժեքների մասին: Երբ մայրս տարազ էր հագնում, նրան չէին ընդունում, որակում էին բոշա կամ բուրդ: Մայրս էր կարողանում դրա մասին խոսել, որովհետեւ կարող էր մեղադրվել ազգայինը քարոզելու մեջ: Անկախությունից ու առաջին արցախյան պատերազմում հաղթելուց հետո էլ՝ մենք նույնպես չկարողացանք վերաբերվել մեր մշակույթը: Մենք սկսեցինք արեւմուտքից վերցնել ինչ- որ նորաձեւ



տարրեր, բայց հետ չնայեցինք, մեր ազգային մշակույթը չփնտրեցինք: Մենք ազատությունը վերածեցինք այլախառնության, իսկ անկախությունը՝ բարձրորդի վիճակի: Ժողովրդական առած կա. «Երդիկը բաց մի պահի, հարեւանիդ գող մի սարքի»: Մենք բաց ենք թողել մեր երդիկը, եւ թուրքերը մեզնից գողացել են: Ցավալին միայն այն է, որ թուրքերը կան եւ գողանում են մեր մշակութային արժեքները: Մենք թուրքական կլկլոցները բերել ենք լցրել մեր միջավայր. մեր հարսանիքներին հնչող երաժշտությունը՝ պլպլան հագուստներով համեմված, ու այս ամենը հակամշակույթ են:

Աստղիկը հիշում է պատերազմից հետո թանգարան այցելած հաշմանդամ դարձածների.

- Ես պատմում էի նրանց թանգարանի հավաքածուի մասին եւ տեսնում էի, թե ինչքան անտեղյակ են նրանք մեր մշակութային ժառանգության պատմությունից: Ես նրանց ասում եմ՝ տղաներ՝ ջան, հայրենիքի մեջ մի ամբողջ հարստություն կա, որի համար ենք մենք կռվել,

անգամ առանց հասկանալու, անգամ առանց ճանաչելու ձեր մշակույթը դուք սին հողի համար չեք կռվել: Հիմա էլ իրենց մոտ ունայնություն է, քանի որ չգիտեն ինչի համար են կռվել, կռիվ են տվել մի բանի համար, որ չեն ճանաչել: Շատ կարելու է հասկանալ սեփական մշակույթը, պատմությունը, այդ պայքարը եղել է արյունով, մեր պապերի արյան կանչի գորությունն է, որ նրանց տարել է պայքարի: Միայն այս արժեքների գիտակցումն է, որ հայրենիքի համար պայքարը իմաստավորում է:

Խոսելով 44-օրյա պատերազմի ու Արցախի մասին, նա հավելեց.

- Մայրս շատ ծանր կտաներ, եթե տեսներ այս պարտությունը: Երեւի միակ անգամն է, որ ցանկացել եմ մայրս չլինի ու չտեսնի այս ծանր պարտությունը: Արցախյան առաջին պատերազմից հետո նա գնաց Արցախ եւ Շուշիի մասին նկարների շարք ստեղծեց: Թանգարանի հավաքածուի մեջ կան նաեւ Արցախից բերված իրեր ու արցախյան տարազի օրինակներ, որոնք շատ թանկ էին մորս համար:

Աստղիկը լավատես է ապագայի հարցում, եւ երկու ճանապարհով է տեսնում՝ վերադարձը մեր մշակութային արժեքներին եւ մեր վերակենդանացումն ու վերագտնումը՝ որպես ազգ.

- Առաջին հերթին, պետական կենտրոնացված քաղաքականություն պետք է լինի մշակութային հարցերում: Պետությունը պետք է իր վերաբերմունքը փոխի մշակույթի հանդեպ, իր ակտիվ միջամտությամբ ուղղորդող դեր ստանձնի: Կան ազգային տոներ, որ պետք է ազգովի տոնենք, ոչ թե՛ ամենքս մեր բակում, որ դա լինի համագային տոն: Պարտադիր է տարազի հագնելն բոլորը: Թող մարդիկ ազատ հագնվեն, ազատամիտ լինեն. ավանդականը՝ անապայման տարազ կրելը է, կարելի է համարել ժամանակակիցն ու ավանդականը:

Եվ երկրորդ, ամեն մեկս մեր ներդրումն ունենանք՝ կրելով զարդեր, պայուսակ, կամ տարազի մոտիվներով հագուստներ: Ես ավելի հեռուն եմ գնացել. ժայռապատկերների տեսքով դաշվածքներ ունեմ մարմնիս վրա, երկար եմ մտածել՝ ինչ անեմ: Փաստն այն է, որ ես դրանցով ավելի շատ եմ հետաքրքրություն սերմանել մեր ժայռապատկերների նկատմամբ, քան կարողավ: Հատկապես երիտասարդների մոտ այդ հետաքրքրություններն ակնհայտ են: Նաեւ տարազի մոտիվներով հագուստներ եմ կարում ու կրում, կամ մեր հին զարդերի դետալներով նոր զարդեր եմ պատրաստում ու կրում: Չարդերն ու զգեստները պետք է ոչ թե զուտ որպես նորաձեւություն կրենք, այլ մշակույթը յուրացնելու առաքելություն տեսնենք դրա մեջ: Այս է ճանապարհը՝ մեզ ու մեր արմատները վերագտնելու ուղին:

Սիրանուշ ՍՄՐՈՍՅԱՆ

Արցախի սկաուտները Բյուրականում

Հայ մարմնակրթական ընդհանուր միության Արցախի մասնաճյուղը իր գործունեությունն սկսել է 2019թ. օգոստոսի 22-ին: Արցախի իր կարելու օրերն ունի միության դաստիարակական ծրագրերում: ՀԱՄԿ-ականները հայրենիքին ծառայելու եւ նրա համար իրենց կյանքը չխնայելու պատրաստակամությամբ իրենց ներդրումն են ունեցել Արցախյան ազատագրական պայքարում. Վարդան Բախշյանը, Վաչե Ռոստոմյանը, Վիգեն Չաքարյանը՝ Արցախյան առաջին, իսկ Գրիգոր Ղազարյանը, Գեորգ Չաքարյանը, Արտակ Իշխանյանը, Արտակ Մարտիրոսյանը, Էրիկ Գալստյանը, Արմեն Առուստամյանը, Հակոբ Ասթարճյանը, Մոսիկ Սեբեմյանը, Հարութ Բանտյանը եւ Հայկ Դերիկյանը՝ Արցախյան 44-օրյա պատերազմում իրենց արյամբ են կերտել Արցախի պատմությունը:



մակերպության նախաձեռնությամբ կազմակերպված սկաուտական բանակումներին:

Առաջին համահայաստանյան բանակումը տեղի է ունեցել օգոստոսի 10-15-ը՝ 300 սկաուտների մասնակցությամբ, որին Արցախից մասնակցում էր 17 սկաուտ:

Բանակումի ընթացքի եւ ՀԱՄԿ Արցախի մասնաճյուղի հետագա գործունեության մասին «Ապառաժ»-ը գրուցել է Հայ մարմնակրթական ընդհանուր միության Արցախի մեկուսի մասնաճյուղի գործավար Լիլիթ Հայրապետյանի հետ:

«Բանակումի ընթացքում արցախցի սկաուտների համար կազմակերպվել են սկաուտական դասընթացներ, արշավներ, խարույկահանդեսներ, ժամանցային խա-

ղեր եւ այլն: Նպատակը՝ սկաուտ խմբապետերի պատրաստում՝ Արցախում ՀԱՄԿ աշխատանքները վերսկսելու համար»,- ասել է Լ. Հայրապետյանը:

Նա նշեց, որ սկաուտները բավականին տպավորված են բանակումից եւ անհամբեր սպասում են հաջորդ բանակումին, որը նախատեսված է կազմակերպել Արցախի Պատրա համայնքում,

սակայն արդեն՝ Արցախի մեկուսի մասնաճյուղի նախաձեռնությամբ: Լիլիթ Հայրապետյանը տեղեկացրեց, որ Արցախում այս պահին կան 88 սկաուտներ, իսկ պատերազմից առաջ 50-ն էին: «Այժմ վերականգնողական աշխատանքներ են կատարվում միության աշխատանքներն ակտիվացնելու համար: Պատերազմից հետո աշխատում ենք 2 ուղղություններով՝ թե՛ սպորտային, թե՛ սկաուտական ասպարեզներում: Սրա հետ միասին մեր գերակա ուղղվածությունն ազգային դաստիարակությունն է»,- ասել է Լ. Հայրապետյանը:

2-րդ բանակումի մասնակից, Հայ մարմնակրթական ընդհանուր միության

Արցախի մեկուսի մասնաճյուղի վարչության Անդամ Վրեժ Ղազարյանն էլ մեզ հետ գրուցում է նշեց, որ բանակումին մասնակցել են Կարմիր շուկայից, Ասկերանից եւ Ստեփանակերտից շուրջ 90 սկաուտներ:

«Այս բանակումին մասնակցել են սկաուտ-խմբապետեր Արցախից, որոնք օգոստոսի 10-15-ը Բյուրականում վերապատրաստման դասընթացներ էին անցել: Սկաուտների օրն սկսվում էր մարմնամարզությամբ եւ նախաճաշով, շարունակվում սկաուտության մասին դասընթացներով, խաղերով, արշավներով եւ ավարտվում ֆիլմի դիտումներով ու խարույկահանդեսով»,- նշում է Վ. Ղազարյանը:

Վրեժ Ղազարյանի խոսքով՝ պատանիները բավական տպավորված էին բանակումի ընթացքից:

«Պատերազմից հետո շատ կարելու է ՀԱՄԿ գործունեության ակտիվացումն Արցախում: Այս բանակումը հենց ազգարարեց այդ մեկնարկը: Այժմ պետք է շարունակենք աշխատանքներն Արցախում՝ սկաուտների հետ պարբերաբար հանդիպումների միջոցով: Այս ընթացքում ուշադրության կենտրոնում կպահենք մեր որդեգրած 2 հիմնական ուղղությունները՝ ազգային դաստիարակություն եւ սպորտային ու սկաուտական մշակույթի զարգացում: Ապագայում նախատեսվում ենք համարարցախյան բանակում»,- ասաց Վրեժ Ղազարյանը:

Վահագն ԽԱՉՏՐՅԱՆ

Արցախի պետականության կերտման առաջին քայլերը՝ Հանրապետության հռչակում

2021թ. սեպտեմբերի 2-ին համայն հայությունը նշում էր Արցախի Հանրապետության անկախության հռչակման հոբելյանական 30-ամյակը:

1988թ. սկզբից արցախահայության ազգային ազատագրական պայքարը բարդ ընթացք է ունեցել:

Հաշվի առնելով այն փաստը, որ 1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանը հայտարարել էր իր անկախության մասին, ԼՂԻՄ-ի իշխանությունները, հիմք

տաշրջանը, արտահայտելով ժողովրդի կամքը, որն ամրագրվել է փաստացի անցկացված հանրաքվեում և ԼՂՀ ու Շահումյանի շրջանի իշխանության մարմինների 1988-1991թթ. որոշումներում, նրա ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության ձգտումը:

- արձանագրելով Ադրբեջանի Հանրապետության կողմից «1918-1920թթ. պետական անկախության վերականգնման» հռչակումը,

- հաշվի առնելով, որ Ադրբեջանում տարվող ապարտեիդի և խտրականության քաղաքականությունը ատելության և անհանդուրժողականության մթնոլորտ է ստեղծել հանրապետության հայ ժողովրդի նկատմամբ, ինչը հասցրել է զինված ընդհարումների, մարդկային զոհերի, հայկական խաղաղ գյուղերի բնակիչների բռնազաղթի,

- հիմնվելով ԽՍՀ Միության գործող Սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և հավաքական ապրող ազգային խմբերին իրավունք են տալիս ԽՍՀ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնուրույն լուծել իրենց պետական-իրավական կարգավիճակի մասին հարցը,

- նշելով, որ Շահումյանի շրջանի տարածքը բռնությամբ էր անջատվել Լեռնային Ղարաբաղից, և բնական ու միջազգային իրավունքի նորմերին համապատասխան համարելով հայ ժողովրդի վերամիավորման ձգտումը,

- ձգտելով միմյանց իրավունքները փոխադարձ հարգանքի հիման վրա հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների վերականգնման,

- նկատի առնելով երկրում ստեղծված վիճակի բարդությունն ու հակասականությունը, միության ապագայի, իշխանության և կառավարման միութենական կառուցվածքների ճակատագրի անորոշությունը,

- հարգելով և հետևելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային պայմանագրի, քաղաքական և մշակութային իրավունքների մասին միջազգային պայմանագրի սկզբունքներին և հույս դնելով միջազգային հանրության ըմբռնման ու աջակցության վրա,

հիմնվելով վերոնշյալի վրա, հանրապետության հռչակումը, որն ամրագրվել է փաստացի անցկացված հանրաքվեում և ԼՂՀ ու Շահումյանի շրջանի իշխանության մարմինների 1988-1991թթ. որոշումներում, նրա ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության ձգտումը:

ԲՈՒՈՐ ՄԱԿԱՐԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՐԶԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՐ ԼՍՏԱՇՐՋԱՆ 1991թ. սեպտեմբերի 2:

Այդպիսով, իրականացվեց մի գործողություն, որն արտացոլված էր այն ժամանակ գործող օրենսդրության մեջ, մասնավորապես՝ 1990թ. ապրիլի 3-ի՝ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքում, որը նախատեսում էր ազգային ինքնավարություններին իրավունք տրամադրել ինքնուրույն կերպով որոշելու սեփական պետաիրավական կարգավիճակը՝ ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում:

Հռչակագրի ընդունումից հետո Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդներին խորհուրդներին ժողովրդական պատգամավորների համատեղ նստաշրջանը ուղերձով դիմեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությանը, Ադրբեջանի ժողովրդին և ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարին:

Իր հիման վրա ինքնուրույնաբար որոշել իր պետական-իրավական կարգավիճակը:

Մինչև ԼՂՀ Սահմանադրության և օրենքների ընդունումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործում են ԽՍՀՄ Սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև և ներկայումս գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին:

ԲՈՒՈՐ ՄԱԿԱՐԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՐԶԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՐ ԼՍՏԱՇՐՋԱՆ 1991թ. սեպտեմբերի 2:

Այդպիսով, իրականացվեց մի գործողություն, որն արտացոլված էր այն ժամանակ գործող օրենսդրության մեջ, մասնավորապես՝ 1990թ. ապրիլի 3-ի՝ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքում, որը նախատեսում էր ազգային ինքնավարություններին իրավունք տրամադրել ինքնուրույն կերպով որոշելու սեփական պետաիրավական կարգավիճակը՝ ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում:

Հռչակագրի ընդունումից հետո Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդներին ժողովրդական պատգամավորների համատեղ նստաշրջանը ուղերձով դիմեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությանը, Ադրբեջանի ժողովրդին և ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարին:

ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումարին ուղղված դիմումի մեջ ասվում էր, որ «Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը 70 տարի շարունակ՝ Ադրբեջանի կազմում բռնակցվելու օրվանից պայքարում է իր ազատության և անկախության համար: Մենք բազմիցս դիմել ենք միության բոլոր մարմիններին, այդ թվում՝ նաև ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների բոլոր համագումարներին, սակայն բոլոր դիմումներն անտեսելը հանգեցրեց նրան, որ ամբողջ Անդրկովկասյան տարածաշրջանը դարձել էր պետության ամենապայթյունավտանգ կետերից մեկը:

Հարցականի տակ էր դրվել Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի և նրա հայ բնակչության գոյությունը:

«Հարգելի համագումար, ուղարկելով ձեզ ընդունված Հռչակագիրը, խնդրում ենք որոշում կայացնել նշված նոր պետական կազմավորման ճանաչման վերաբերյալ, որը երաշխավորում է հավասար իրավունքներ իր տարածքում ապրող բոլոր քաղաքացիների համար, ակտիվ համագործակցություն բոլոր հանրապետությունների հետ՝ ԽՍՀՄ Սահմանադրության հիման վրա:

Հաշվի առնելով, որ Հռչակագրի ընդունման կապակցությամբ իրավիճակի ապակայունացման համար կարող են ձեռնարկվել նոր գործողություններ, խնդրում ենք միության համապատասխան մարմիններին նախատեսել շտապ միջոցներ՝ դրանք ճնշելու, բնակչության անվտանգությունն ու նորաստեղծ հանրապետության տարածքի ամբողջականությունն ապահովելու համար:

Լեռնային Ղարաբաղի հանրապետության բնակչությանն ուղղված դիմումի մեջ հայրենիքի համար պատմական ժա-

մանակաշրջանում ԼՂ բնակչությանը միասնության և համերաշխության կոչ էր արվում, քանի որ նրանցից էր կախված հայրենիքի իրական ազատության ձեռքբերումը: Խորհրդային վարչակարգի ձեռնարկված փորձում էր ճնշել արցախցիների ազատության ձգտումը, սակայն արցախցիների կամքն ու վճռականությունը չի սասանվում: «Ոչ ոք է ոչինչ չի կարող շեղել մեզ մեր ընտրած ճանապարհից», - ասվում էր դիմումի մեջ:

Համագումարը չէր բացառվում, որ Ադրբեջանում կգտնվեն ուժեր, որոնք զավթողական ցուցումներով կարող են նոր լարվածություն հրահրել Լեռնային Ղարաբաղում: Ուստի, պետք էր պատրաստ լինել հայրենիքը ցանկացած ոտնձգությունից պաշտպանելու համար:

Դիմումի մեջ նաև նշված էր, որ Լեռնային Ղարաբաղում երաշխավորվում է մարդու իրավունքների անխախտ պահպանումը՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից և քաղաքական համոզմունքից:

Հայ և ադրբեջանական ժողովուրդներին վիճակված է ապրել կողք կողքի: Համագումարը, դիմելով Ադրբեջանի ժողովրդին, իր փոստասնքն էր հայտնում առ այն, որ երկու ժողովուրդները շատ թանկ վճարեցին՝ հասկանալու համար, որ ատելությունը, թշնամանքը, առճակատումը մահացու են բոլորի համար:

«Հույս ունեցե՛ք և հավատում ենք, որ Ադրբեջանի ժողովուրդը իր մեջ քաջություն և ուժ կգտնի՝ ՌՀ ասելու Ադրբեջանում սանձազերծված հակահայկական հիստերիային:

Պատմությունն ու կյանքն ապացուցեցին, որ ուրիշ ազգերի վրա իշխող ազգը չի կարող լինել ազատ: Եթե մենք անկեղծորեն հավատարիմ ենք բարեկամության և փոխըմբռնման գաղափարին, ուրեմն պետք է անվերապահորեն ճանաչել յուրաքանչյուր ազգի՝ ինքնուրույն պատմական ընտրություն կատարելու իրավունքը: Բռնությունն այս հիմնարար հարցում անընդունելի է, քանի որ այն հանգեցնում է պատասխան բռնության: Թե ինչ հետեւանքներ կարող են լինել, մենք բոլորս լավ գիտենք:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը լիովին համապատասխանում է ԽՍՀՄ Սահմանադրությանն ու օրենսդրությանը և ոչ մի կերպ չի ոտնահարում ադրբեջանական ժողովրդի իրական շահերը: Ժողովրդավարությունն ու ազատությունը չեն կարող լինել ընտրովի, հակառակ դեպքում՝ դրանք կորցնում են իրենց իմաստը:

Մենք ըմբռնումով ենք ընդունում ադրբեջանական ժողովրդի անկախության ձգտումը և ակնկալում ենք կշռադատված մոտեցում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամարտահայտման նկատմամբ: Համաձայնության այլ ուղի, ցավոք սրտի, չկա», - ասվում է Ադրբեջանի ժողովրդին ուղղված դիմումի մեջ:

Իրողությունը սրբորով ընդունվեց Ադրբեջանի ղեկավարության կողմից: 1991թ. նոյեմբերին Ադրբեջանը զինված հարձակում սկսեց ԼՂՀ-ի դեմ:

Արցախահայության պետականության վերակերտման ճանապարհին կարելու քայլ էր 1991թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպված հանրաքվեն, որի մասնակիցների 99.89 տոկոսը կողմ քվեարկեց ԼՂՀ անկախացմանը:

1992թ. հունվարի 6-ին, լինելով ազգերի ինքնորոշման միջազգային իրավունքի սկզբունքից և հիմնվելով ԼՂՀ ժողովրդի ազատ կամարտահայտության վրա, ԼՂՀ Գերագույն խորհրդի նիստում ընդունվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին Հռչակագիրը:

Վահագն ԽԱՉՏՐՅԱՆ



ընդունելով միջազգային իրավակարգավորումներն ու ԽՍՀՄ օրենքները, ընտրեցին այլընտրանքային տարբերակ:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան՝ բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ, որի արդյունքում կայացվեց հանրապետությունն հռչակելու որոշում: Այն էր.

«1. Ընդունել Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակման մասին՝ այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և նրան հարակից Շահումյանի շրջանի սահմաններում:

2. Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհուրդը և նրա գործադիր կոմիտեն համարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր բարձրագույն մարմին՝ մինչև համաժողովրդական ընտրությունները և հանրապետության նոր մարմինների ձևավորումը:

3. Ժողովրդական պատգամավորների Մարզային խորհրդի գործկոմի հանձնարարել՝ ներգրավելով այն հասարակայնությանը, ձևավորել և ներկայացնել Մարզային խորհրդի իշխանության ու կառավարման մարմինների կառուցվածքի և ֆունկցիաների վերաբերյալ ժամանակավոր դրույթները:

4. ԼՂՀ տարածքում, մինչև հանրապետության Սահմանադրության և օրենքների ընդունումը, գործում է ԽՍՀՄ օրենսդրությունը, ինչպես նաև՝ այժմ գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին:

Որոշման արդյունքում ընդունվել է հետևյալ Հռչակագիրը.

ՀՈՉԱԿԱԳԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱՆ ՄԱՍԻՆ

Բոլոր մակարդակների խորհուրդներին պատգամավորների մասնակցությամբ Լեռնային Ղարաբաղի մարզային ու Շահումյանի շրջանային խորհուրդների պատգամավորների համատեղ նս-